№ 144 ՈՒՐԲԱԹ 4 ՅՈՒԼԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 4 ՅՈՒԼԻՍԻ № 144

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՎ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:
ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀետԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:
1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ԶՐԻՒԱԼՔ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրթին:
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ղարաբաղի Հ. Հոգ. Թեմ. Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված դպրոցի համար առաջիկայ 1914/15 ուսումն. տարվանից հրաւիրվում են բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ ուսուցիչներ՝
ա) Կրօնական առարկաների (աստուածաբան).
բ) Հայոց լեզուի և գրականութեան.
գ) Ընդհանուր և հայոց պատմութեան.
դ) Բնագիտութեան և աշխարհագրութեան.
ե) Մաթեմատիկայի.
Պայմանները մասին դիմել դպրոցի տեսուչ պ. Ղազար Տէր-Ղազարեանին:
Հասցէ՝ Шуша, Елисавет. губ. Ректору Армянской Духовной Семинаріи Газару Теръ-Газарянъ.
առ. (օ. մ.) 663. 4—2

ՑԻՐԿ
Ֆ. ԻՊՊԱՏՕՎԻ

Այսօր, ուրբաթ, յուլիսի 4-ին տեղի կունենայ բենեֆիսային խոշոր ներկայացում: Այսօր տեղի կունենայ ցիրկի կառավարիչ Խունդաձէի բենեֆիսը: Գը մասնակցին խմբի բոլոր անդամները, տանց բացառութեան: Գը կատարվին ամենալաւ նոմէրներ՝ գլխաւորութեամբ օր. Եկնա Բոպատօվայի: Այսօր վերջին անգամը կը գրվի մեծ դղրդին առաջադրած «Ցանգոյի դատապարտութիւնը» պանտոմիման, մասնակցութեամբ ամբողջ խմբի: Այսօր տանգո! Ցանգո! 10 դրդ! 10 դրդ! Բենեֆիցիանտ Խունդաձէն խնդրում է գեղեցիկ կանանց՝ ներկայանալ իր բենեֆիսին, սակայն զէթ այսօր, ամբողջ սէզոնի ընթացքում մէկ անգամ, դնել տոմսակ:

ԳՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի

Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէ՝ Берлинъ, Фридрихштрассе 133 a. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) առ. 391. 100—29

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մինիստրների խորհուրդը հաւանութիւն տուեց օրէնսդրական հաստատութիւնների քննութեանը ենթարկելու լուսաւորութեան մինիստրութեան այն առաջարկութիւնը, որով 2.671,000 ռուբլի է պահանջվում Պետրոս Մեծի անունով հանրային թանգարան և Լօմոնոսովի անունով գիտութիւնների ճեմարանին կից ինստիտուտ շինելու համար:

«Торгов. Промыш. Газ.»-ի հեռագրական տեղեկութիւնների համաձայն, Ռուսաստանի ցանքսերի բերքի տեսքը վատացել է: Ընդհանուր առմամբ բերքը միջակ է առ այժմ:

Գիներալ-մայոր Դումբաձէն նշանակվում է Եալտայի քաղաքապետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Արտաքին գործերի մինիստրութեան աւագ խորհրդական Արցիմովիչ նշանակվեց արտաքին գործերի մինիստրի օգնական:

ՏՈՒԼԱ.—Առաւօտեան գնացքով եկաւ ներքին գործերի մինիստր Մակլակով: Կայարանում մինիստրին դիմաւորեցին նահանգապետ վարչութեան ծառայողները նահանգապետի գլխաւորութեամբ: Երեկոյեան ժամը 8-ին նահանգապետի տանը, ի պատիւ մինիստրի, հանդիսաւոր ճաշ տրվեց:

ՊԱՐԻԶ.—Ռուսական դեսպան Իզվոլսկին մեկնեց Պետերբուրգ:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Սվեատոյ Նոսի մօտ «Իօանն» առագաստանաւը, որ բեռնված էր ձկնով, ծովային արկածի ենթարկվեց:

ՎԻԵՆԱ.—Նահանգում, գիւղացիների համախմբումների համաձայն փակված են խմիչքեղէնի 63 խանութներ ու գործարաններ:

ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՍԿ.—Քաղաքը պատրաստվում է անգլիական էսկադրային դիմաւորելու, որը գալու է վաղը:

Չը տեսնված շղթեր են լինում:

ԴՈՒՐԱՑՑՈ.—Կառավարութիւնը նորից պարլամենտարներին ուղարկեց ապստամբների մօտ, որպէսզի առաջարկեն նրանց բանակցութիւնների մէջ մտնել անմիջապէս ազգաբնակութեան կամ կառավարչի հետ: Պարլամենտարները պատասխան ստացան, որ չեն կամենում բանակցութիւններ սկսել, որովհետև ապստամբ են Վալենի անկման: Վալենից հաղորդում են, որ այնտեղ ապստամբում են ապստամբների և եկիրոսցիների գալստեան:

ԼՕՆԴՕՆ.—Թագաւորը այս օրերս դիտելու է նաւատորմիղը, այդ պատճառով անգլիական ջրերում եղած բոլոր ռազմանաւերին մոբիլիզացիա են անում: Զէնքի են կանչվում նոյնպէս պահեստի 15,000 զինուոր, 11 օրով:

ԼՕՆԴՕՆ.—Երկու սուֆրաժիստուհի յարձակվեցին Շոտլանդիայի գործերի վարչութեան քարտուղար Մակ-Կինոն-Վուդի վրա, երբ նա մտից դուրս էր գալիս, և ճիպոտներով ծեծեցին: Երկուսն էլ ձերբակալվեցին:

ՎԻԵՆԱ.—Յուլիսի 4-ին կը հրատարակվի մի հրովարտակ Գալիցիայի սէյմը արձակելու և նոր ընտրութիւններ նշանակելու մասին: Սէյմը արձակվում է ընտրական նոր օրէնքի այժով:

ԲԷԼԳՐԱԴ.—Այն տեղեկութիւնները, թէ Բէլգրադում հակաւստրիական ցոյցեր են կատարվում—անհիմն են: Քաղաքում կատարեալ հանգստութիւն և օրինակելի կարգ է տիրում:

ԲԵՆԳԱԶԻ.—Գնդապետ Լատինի յայտնում է Կիրէնից, որ Մարաւի մօտ, արաբների հետ եղած ընդհարման ժամանակ, սպանվել են 100 հոգի:

ՊԱՐԻԶ.—Պալատը և սենատը ընդունեցին բիւջէն: Նստաշրջանը փակվեց:

ՀՐԴԵՀՆԵՐ ԵՒ ՀԵՂԵՂՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 յուլիսի

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ.—Անտառային հրդեհները շարունակվում են: Կրակը բռնել է 20 վերստ տարածութիւն բռնող անտառներ: Շէնկուրի ողջ գաւառը ծխի մէջ է:

ՎՕԼՈԳԴԱ.—Անտառային հրդեհները հանգցնելու համար, նահանգապետի խնդրանքով, Պետերբուրգի շրջանից եկան մի քանի վաշտ զօրք:

ԿԻՐԻԼՈՎ.—Այրվում են արքունական անտառները: Հանգցնելու եկաւ Կասպիյսկի գնդի զինուորների մի գումարտակ: Կրակը հանգցնելու ժամանակ այրվեցին երկու գիւղացի:

ՍԼՈՒՑԿ.—Դոկտորովիչ գիւղում հրդեհվեց 137 տուն անտեսութիւններով: Շատ տեղ անասուններն էլ այրվեցին:

ՊՕԼՏԱՎԱ.—Զօլոտոնոշի գաւառի Բէլոուսովկա գիւղում կարկուտը և հեղեղը վնասեցին 1594 դես. տարածութիւն բռնող ցանքսեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԱՌՈՒՑԻ ԳՈՐԾԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Թիֆլիսի պէս մի քաղաք, որի ազգաբնակութիւնը օրէ-օր աճում է և գրեթէ հասել է 400,000-ի, մինչև օրս չունի մի քանի կազմակերպված սառցագործարաններ, որոնցով բաւարարվեր այն մեծ պահանջը, որը հետզհետէ աւելանում է, և որոնցով կապահովվէին փչանալուց մեր քաղաքի կենսական մթերքները, որպիսիք են մսը, ձուկը և այլն: Սառուցի կարիքը մանաւանդ աւելի զգալի է լինում այն ժամանակ, երբ տեսնում ենք, որ այդ գործում ամբողջ ազաբնակութեան գրեթէ 90%-ի բաղդը կապված է մի քանի չարչիների քմահաճոյքից, որոնք գայլի ախորժակները սրած իրանց 8—10 կ. արժեցող սառուցը ծախում են պուդը 50—60 կ.: Թիֆլիսում եղած երկու գործարանները, համեմատած՝ 12 քաղաքամասերի հետ, այնքան չնչին թիւ են կազմում, որ օր ու գիշեր անընդհատ աշխատելով հազիւ ազգաբնակութեան $^1/_{20}$ մասին բաւարարութիւն կարողանան տալ, դեռ չենք ուզում ասել, որ նրանք էլ կարսից սառուց բերել տուող չարչիներից ոչ մի բանով յետ չեն մնում և դեռ մի քիչ էլ առաջ են գնում, պատճառաբանելով որ իրանց պատրաստած սառուցը բոլորովին մաքուր է և այլն:

Բաթումի պէս մի նահանգական քաղաք, որի ազգաբնակութիւնը 28—30,000-ից չէ անցնում, ունի մի մեծ գործարան, ուր օրական պատրաստվում է մօտ 400—500 պուդ սառուց: Այդ գործարանատէրը, ի նկատի առնելով իր մենաշնորհական դրութիւնը և օգտվելով իր մենակ լինելուց, անցեալ մայիսից սառուցի գինը բարձրացրեց 80 կ. պուդը և դեռ մտադիր էր կրկին 20 կ. աւելացնելու, երբ նոյն տեղի քաղ. վարչութիւնը անմիջապէս արտակարգ նիստ գումարեց և դրականապէս վճռեց 35—40,000 ր. ծախսել և շինել մի կանոնաւոր գործարան, որը կարողանար մինչև 1000 պուդ սառուց հայթայթել օրական, և այդ սառուցի համար գին նշանակեց պուդին 20 կ.: Այս բանը իմանալով՝ սառցագործարանատէրը անմիջապէս խնդրագրով դիմեց քաղ. վարչութեան, որ իր գործարանը գնի, փոխանակ նորը շինելու, և հետևեալ օրը սառուցի գինը իջեցրեց 40—50 կ.: Թէ ինչ հետևանք կունենայ այդ առաջարկութիւնը, դա ապագան ցոյց կը տայ. բայց որ գինը իջաւ պուդին 30—40 կ., այդ փաստ է:

Շատ տարօրինակ է թւում մեզ, որ մեր քաղաքի հայրերը չեն էլ բարեհաճում մտածել, որ եթէ նոր սպանդանոցի վրա հարիւր հազարներ են ծախսել, ամեն բան շինել են տուել վերջին տեխնիկայի պահանջով, և եթէ այնտեղի սառցարանները օրինակելի են համարվում, ապա ինչու անտես պիտի անել և չը պիտի մտածել, որ նոյն ապրանքները քաղաք բերելիս էլ նոյն ապահովութեան մէջ լինեն և թարմ պահվեն, որպէսզի ազգաբնակութիւնը կարողանայ այդ մթերքները թարմ դրութեան մէջ ստանալ: Այլապէս՝ ստացվում է մի անբնական դրութիւն: Օրինակ՝ մսավաճառը բերում է դիցուք մի քանի եզ և ոչխար, ծախելուց յետոյ մնում է մի երկուսը: Ասացէք խնդրեմ, ինչպէս վարվի նրա հետ. սառցարան չունի, սառուցն էլ պուդը 60 կ.: Ուրեմն ինչ անել: Պարզ է, որ պիտի ծախէ հետևեալ օրը, իսկ հետևեալ օրը արդէն մսից ծանր հոտ է գալիս: Դէ հիմա էլ սկսվում է նոր պրոցես, բազարնիկների կոմբինացիաները, սանիտարական բժիշկների արձանագրութիւնները և այլն և այլն: Եւ այս բոլորը՝ անվերջ:

Ճանկալի է որ օր առաջ մեր քաղաքի հայրերը մտածէին այս լուրջ և կարևոր հարցի համար և, օրինակ վերցնելով Բաթումի քաղաքային վարչութիւնից, 30—40 հազար ր. ծախսէին և մի օրինակելի սառցագործարան շինէին, որով այդ չարչիների դայլային ախորժակին մի փոքր սանձ կը լինէին դրած, և այդ գործարանը հիմնելով թէ քաղաքը կը լինէր օգված և թէ ազգաբնակութեան համար մատչելի կը լինէր 15—20 կ. պուդին վաճառելը:

Մեր քաղաքի հայրերը գոնէ այս բանով կարողանան իրանց վարկը բարձրացնել, ազատելով ազգաբնակութիւնն հոտած ու փտած մթերքներից. երևակայեցէք թէ ինչ դրութիւն է ստեղծվել ազգաբնակութեան համար հէնց թէկուզ միայն մսի վերաբերմամբ (մեր խօսքը հարուստների մասին չէ):

Սակաւնի բացակայութիւնը, որով մսավաճառները իրաւունք են համարում իրանց ուզած գինը առնել և իրանց ուզած տեղից կարել. 2) մսագործների կապրիզները, որոնց դէմ իրաւունք չունես ծպտուն հանելու, հակառակ դէպքում մի լաւ կը զուլխես նրանցից. 3) մսի հոտած լինելը, որի համար եթէ գանգատ անես, արձանագրութիւն, տուգանք, և այլն, ուրեմն էլ միւս անգամ այդ խանութին չը պիտի մօտենալ. և ահա այսպէս հազարաւոր փաստեր, որի համար, կրկնում ենք, մեր քաղաքի հայրերի անմիջական պարտականութիւնն է մտածել և օր առաջ հոգալ:

Ա. Էլիզբարեան

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

II

5) Դրամական նուիրաբերութեան ստորագրութիւնը նոյնպէս պէտք է անպէտք համարել, քանի որ 19 տարվայ ընթացքում ով ցանկացել-կարողացել է, տուել է, և հազիւ 35,000 ր. է հաւաքվել և այդ էլ շինութեան վրա է ծախսվել:

Երբ հանգուցեալ Սեդրակեան սրբազանը 1895 թ. դեկտ. բացեց առաջին հանգանակէչ ժողովը և հրաւիրեց ներկայ եղողներին ստորագրել, մի 10 բոպէի չափ ոչ ոք տեղից չը շարժվեց, վերջը մի ոչ-ընիկ աստրախանցի կանգնեց և ձեռքը դնելով կրծքի վրա՝ ասաց. «Սրբազան հայր, ես ցանկանում եմ ստորագրել»: Ժողովականների մէջ թեթև շշուկ սկսվեց, թէ հիմա սա կը գնայ և ստորագրութեան թղթի սկզբում մի փոքրիկ գումար կը դնի ու թուղթը կը փչացնի, բայց երբ այդ պարոնը 1000 ր. ստորագրեց, ժողովականները մնացին զարմացած, թէ ի՞նչպէս սիրտ արեց այս մարդը իր փոքրիկ կարողութիւնից այդպիսի մի գումար նուիրաբերել: Նրանից յետոյ ստորագրեցին աստրախանցի հարուստները, որոնցից յիշում եմ յայտնի եղ. Ս.-երը 500 ր., տարիներով աւագ եկեղեցում երէցփոխ եղած Թ.՝ 20,000 աղիւս. և երբ ժողովում հեգնական ձայներ լսվեցին, «բա շինութեան համար քարփինջ պէտք չէ». ասաց ստորագրողը իր սովորական խրոխտ հայեացքը ձգելով շրջապատը:

Պէտք է ասած՝ այդ երեկոյ ստորագրութիւնը աջող չանցաւ և անպէտք էլ շարունակվեց, մինչդեռ դրանից մի երեք տարի առաջ, երբ գինեվաճառների հայ կրօնասոյցների ռոճիկը փոքր ի շատէ ապահովելու հարցը ծագեց, սրբազան Սուրէնեանը իր մօտ հրաւիրած հարուստներից մի երեկոյում մօտ 25,000 ր. դրամագլուխ հաւաքեց:

6) Եթէ երեք առաջնորդներն էլ աշխատել են թեմ. դպրոցը բանալ Աստրախանում, դա ունեցել է միայն մի նպատակ—դպրոցը մեկուսացնել Կովկասում տիրող Եանօվսկիի և Գօլիցինի ստեղծած հայատեաց ըէժիմից:

Անկախ այդ զեկուցումից պէտք է ասել՝

ա) Աստրախանում գոյութիւն ունի Աղաբաբեան դպրոցը, որտեղ մայրենի լեզուն պարտադիր է: Արդ՝ եթէ թեմ. դպրոցը բացվի Աստրախանում, անշուշտ այդ դպրոցի աշակերտների մեծ մասն էլ իրան կը գրաւի. ապա ինչ կը լինի այդ ապահովված դպրոցի դրութիւնը, դպրոց՝ որ ունի ահաւոր անշարժ կայք, թերևս և դրամագլուխ:

բ) Աստրախանի գաղութի պակասելը. Վեհափառ Հայրապետը ս. Աստուածածնի եկեղեցում երբ առաջորդական գահից իր վերջին քարոզը տուեց, հիմնվելով կօնսիստօրիայից վերցրած թուերի վրա՝ ցաւօք սրտի յայտնեց ժողովրդին, որ Աստրախանի հայ գաղութի թիւը հետզհետէ պակասում է: Դեռ թարմ են յիշողութեանս մէջ քարոզից այս խօսքերը. «Ձեզ պակվում կամ մաշվում ու հիւծվում և յետոյ էք պակվում, առաջացնում հիւանդոտ սերունդ. փտած ծառից ինչ պտուղ: Հարուստներն ուզում են իրանց աղջիկներին պակել անպատճառ հարուստ տղաների հետ, բայց նրանք էլ չեն պակվում. հարուստներն անպատուութիւն են համարում իրանց աղջիկներին տալ իրանց ընդունակ, խելօք և հասկաց գործակատարներին, նրանց համար գործ ստեղծել, առաջ տանել, մոռանում են, որ իրանց պապերը կառապաններ կամ դռնապաններ կարող են եղած լինել»:

գ) Աստրախանի թեմը շատ աննպաստ պայմանների մէջ է գտնվում. ոչ մի քաղաք չունի իր շրջակայքում հայ գիւղեր, որտեղի երեխաները լցվէին թեմ. դպրոցը, այս պատճառով էր քաղաքումն էլ բացվի դպրոցը, նա կը ծառայի զուտ այդ քաղաքի հայերի կարիքներին. օրինակ ով պէտք է իր երեխային ուղարկի Աբմաւիրի թեմ. դըպրոցը, եթէ Աբմաւիրում բացվի, ու գիտցած հայերէնն էլ ակամայից պիտի մոռանայ, քանի որ տարիներով երկդասեան դըպրոց սովորած և աւարտած արմաւիրցին չէ կարողանում իր միտքը փոքր ինչ ազատ հայերէն արտայայտել, բայց, գոնէ, մեր թարական կը լինի այն, որ Արմաւիրը շատ թւով աշակերտներ տալով թեմ. դպրոցին և աշակերտներն աւելի շատ տարիներ սովորելով՝ մինչև աւարտելը կիւրացնեն մայրենի լեզուն, և մի 10—15 տարուց յետոյ չէրքէզախաս հայը ազատ կը խօսի և կը կարդայ իր մայրենի լեզուով: Եւ այսպէս, Յիսուսի տաճի համաձայն, մեր մի կորած ոչխարի գտնելը մեզ աւելի կուրախացնի, քան 99 հատ ունեցածներս: Այս կողմից իրանք, աստրախանցիք, պէտք է զիջող լինեն, մանաւանդ որ, դեռ ևս Մատթէոս արքեպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ, ինչպէս ես առիթ ունեցայ ծանօթանալ կօնսիստօրիայի արձանագրութիւնների հետ, երկու անգամ բացվել ու փակվել է դպրոցը, միայն 18—24 աշակերտներ ունենալու պատճառով, չը նայելով որ «ճեմարանի» անունն էլ են տուել:

Իսկապէս աստրախանցիք թեմ. դպրոցի հարցից առաջնակարգ հարց պէտք է համարեն օրիորդական դպրոցի և այն էլ միջնակարգ դպրոցի բացումը: Տարիներ առաջ գոյութիւն ունեցող 6 տարվայ դասընթացքով օր. դպրոցը քանի տարի է, ինչ-ինչ պատճառներով, անկախ հասարակութեան կամքից՝ փակվել է, և հայ օրիորդները հնարաւորութիւն չունեն ոչ մի տեղ մայրենի լեզուն սովորելու, մինչդեռ տղաների առաջ բաց է Աղաբաբեան դպրոցը:

Աստրախանցի հայերը առանց թեմ. դըպրոցի շատ աւելի քիչ բան կը կորցնեն, քան առանց օրիորդական դպրոցի. առանց հայ հոգով կրթված մայրերի դժուար է պահպանել ընտանիքում մայրենի լեզուն ու զգացմունքները: Հէնց անցեալ տարի ամբոնացում գիմնազիայի կրօնուսոյց քահանան գանգատվում էր ասելով՝

— Էլ առաջվայ հետաքրքրութիւնը, սէրը և զգացմունքը դէպի մայրենի լեզուն չը կայ աշակերտուհիներիս մէջ, ինչպէս որ առաջներում էր, երբ սովորում էին այս-ինչ աշակերտուհիները (թւեց ազգանունները). նրանք սիրով էին պարապում և իրանց ընկերուհիների մէջ էլ սէր ու եռանդ էին մացնում աշխատելու: Չը գիտեմ ե՞ս եմ փոխվել, չեմ կարողանում առաջվայ նման հետաքրքրել նրանց, թէ նրանց զգացմունքներն են բթացել:

— Դուք չէք փոխվել, տէր հայր,—ասում եմ,—այլ պայմանները. ձեր թւած աշակերտուհիները իրանց ուսումը սկսում էին օրիորդական հայոց դպրոցում և աւարտում գիմնազիան: Դուք ստանում էիք հայ հոգով ու զգացմունքներով աշակերտուհիներ, որոնք ոչ միայն իրանց ընկեր-աշակերտուհիների մէջ էին սէր դէպի մայրենին զարթեցնում, այլ և իրանց ընտանիքներում ու շրջապատում:

Աստրախանցիք վաղ թէ ուշ կունենան օր. դպրոց, և անկասկած—եթէ թեմ. դպրոցը չը բացվի Աստրախանում—այդ դպրոցը կը հացնեն միջնակարգի, որ և կունենայ աշակերտուհիների բաւարար թիւ, որովհետև դա կը լինի նախ՝ միակ օր. դպրոցը և երկրորդ՝ շատ ծնողներ, որոնք իրանց զաւակներին տալիս են պետական միջնակարգ դպրոցները բարձրագոյն կրթութեան հասցնելու յուսով, ծախսերը թեթևացնելու համար աղջիկներին կը տան օր. դպրոցը:

Աստրախանի միջնակարգ օր. դպրոց աւարտող հայ օրիորդները կը լինեն Կովկասի հայ գիւղերի և քաղաքների ամենացանկալի վարժուհիներից, որոնք տիրապետելով հայ և ռուս լեզուներին համահաւասար չափով, մանաւանդ ռուսերէնի հարազատ արտասանութեամբ, բոլոր առարկաներն էլ միևնոյն աջողութեամբ կաւանդեն, մանաւանդ որ մեր ունեցած մի երկու միջնակարգ օր. դպրոցների աւարտողներից շատ քչերն են մտնում կանանց մէջ գործելու:

Թէ որքան ցանկալի վարժուհիներ կը լինեն աստրախանցի օրիորդները Կովկասում, այստեղ միջանկեալ մէջ եմ բերում մի դէպք. տեղիս ժողովրդական դպրոցներից մէկում, ռուսաց լեզուի դասից յետոյ, ինսպեկտորը, դուրս գալով դասարանից, հայ վարժուհուն, որն իր ընկերուհիների հետ համեմատած դեռ ևս աւելի աջող արտասանութիւն ունէր, ասում է.

— Ամենից առաջ դուք ինքներդ աշխատանք գործ դրեք ձեզ վրա ռուսերէնը մաքուր արտասանելու. աշխատեցէք արտասանել այնպէս, ինչպէս ատրպատականցի հայերն են արտասանում. նրանք շատ զեղեցիկ, մաքուր ու հարազատօրէն են արտասանում ռուսերէնը։

Այսպէս թէ այնպէս՝ օր. դպրոցը ասատրախանցիների համար հրամայողական պահանջ է։ Կարող է արդեօք այդ փոքրիկ գաղութը պահպանել թէ օրիորդական և թէ թեմ. դպրոցները, քիչ յոյս դնելով թեմի յօժարակամ կամ պարտադիր օգնութեան վրա։ Հաշիւ թէ. ապացոյց, որ երբ հայը Մկրտումեանը շրջում է թեմը, միայն 1915 ը. է կարողանում հաւաքել դպրոցի օգտին և այն էլ, ով գիտէ, գուցէ ցրված ատրպատականցիներից։

Ցամենայն դէպս պատե՛ւ և պարծանք ատրպատականցիներին, որ դպրոցի բացման համար թեմի միւս քաղաքներից ամենից շատ ու եռանդով իրանք են անդուլ աշխատում։

Եթէ թեմ. դպրոցի հարցը ատրպատականցիների համար անաչառ անցնի, նրանց մնում է նորից ու նորից փորձեր անել. թերևս այս անգամ, Վեհափառ Հայրապետի միջնորդութեամբ, դպրոցը վերակազմեն նոր ծրագրով, եթէ ոչ հայերէն դասաւանդութեամբ, գոնէ դարձնեն բարձր սկզբնական դպրոց՝ հայերէնին մեծ տեղ տալով։ Եւ հաւանական է, որ կառավարութիւնը յարգի Վեհափառի միջնորդութիւնը, որովհետև սխալ քաղաքականութիւնը դէպի հայերը տեղի է տալիս բարեացակամ վերաբերմունքի։

Պէտք է օգտվել պատեհ նպաստաւոր բոպէից։

Բ. Գ. Հին ակնատես

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւղական գործերից

Շնող, 24 յունիսի

Թղթամոլների ասկորներն ու միւսը վարակիչ ախտի նման կրծոտող հիւանդութիւնը՝ թղթախաղը կամաց-կամաց սկսում է տարածվել այստեղ, և նրա տարածողները տարաբաղդաբար հէնց նրանք են, որոնք գիւղում ունեն նշանաւոր դիրք և համարվում են առաջնակարգ անձինք... Եւ որովհետև նրանք ծնողներ են ուսանող զաւակների, ուստի ուզում եմ հաւատալ, որ նրանք ի սէր մատաղ սերունդի կը դադարեն այդ ախտը ընդհանրացնելու հեղինակը համարվելուց...

Անցեալները հասարակութեան միջից ընտրվեցին հաշուետեսներ, որոնք պէտք է քննէին նախկին տանուտէրի և այլ հաշիւներ. քննեցին, հետևանքը ուղարկեցին ուր հարկն է, սակայն մինչև օրս էլ այդ հաշուետեսները իրանց ընտրող հասարակութեանը դեռ ևս ոչ մի բացատրութիւն չեն տուել։ Մթթէ հասարակութիւնը նրանց ընտրեց տեսած հաշիւների մասին լռելու համար մի՞այն։

Դեռ անցեալ տարվանից մի խումբ մարդիկ էլ ընտրվել էին գիւղում կատարված գողութիւնների հեղինակներին գտնելու և հասարակութեան ձեռքը տալու նպատակով։ Սկզբում, քանի դեռ նոր էին, նրանք ցոյց տուին գործունէութեան նշաններ, սակայն քիչ-քիչ հնանալով գործից սառեցին և այժմս միանգամայն ոչինչ չեն անում և ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

I

Կովկասեան քաղաքների շարքում Ալէքսանդրօպօլը մի առանձնայատուկ տպաւորութիւն է թողնում նորեկի վրա՝ թէ որպէս զուտ հայաբնակ քաղաք և թէ որպէս զօրաբանակավայր։

Քաղաքի հիւսիս-արևմտեան կողմը, ընդարձակ տարածութեան վրա, ընկած են զօրանոցները և բանակի վրանները, իսկ միւս կողմից էլ դեռ շարունակում են շինվել նորանոր հոյակապ զօրանոցներ, որոնք, երկչոքը ձգելով քաղաքից Ախալքալաք տանող խճուղու վրա՝ բաւական ուշադրաւ տեսարան են ներկայացնում։

Այստեղի շինութիւնները բացառապէս սև քարից են և այդ պատճառով էլ, երբ մարդ բարձրադիր տեղից դիտում է, քաղաքը խիստ մռայլ և խորհրդաւոր տպաւորութիւն է թողնում. կարծէք հարիւրաւոր գործարանների կամ որևէ հրաբխային ծխից քաղաքի շինութիւնները սևացած, մրոտված լինեն և ընակչութիւնից դատարկված։

Ալէքսանդրօպօլը, մեր միւս գաւառական քաղաքների նման, տիպիկ ասիական է. փողոցների կեղտոտութիւնը, տեղ-տեղ նոյն իսկ գարշահոտութիւնը, մայթերի անհարթութիւնները և այլն խիստ աչքի են ընկնում։

Առանձնապէս քաղ. ինքնավարութեան կողմից միանգամայն դատապարտելի անհոգութեան են տրված քաղաքի հեռաւոր, խուլ թաղամասերը, որոնցում ընակվում են գըլխաւորապէս աշխատաւոր դասակարգի և հասմեստ միջոցների տէր ընտանիքներ։

Երևակայեցէք, Ալէքսանդրօպօլի այդ ծայրամասերում դուք ձեզ կատարելապէս զգում էք ոչ աւել, ոչ պակաս՝ քան Շիրակի մի որևէ գիւղում... Այս հեռաւոր թաղերի ազատ տեղերը և բակերը, որոնք այլ պայմաններում կարող էին զեղեցիկ պարտէզներ և զբօսավայրերի վերածվել, բռնված են «բասմաներով», այսինքն անասունների աղբից պատրաստվող վառելանիւթի (ածխի, քակոր) կոյտերով, որոնց գարշահոտութիւնը ուղղակի մարդու քիթն է ծակում... Եւ եթէ դրանց վրա աւելացնենք և այդ փողոցների գիշերային մութ-խաւարը (լապտերները լուսաւորում են միայն կենտրօնական փողոցները), այն ժամանակ դիւրին կը լինի մակաբերել այն դժնդակ կացութիւնը, որի մէջ ստիպված են ապրել այդ թաղամասերի դժբաղդ բնակիչները։

II

Քաղաքի ներքին, կուլտուրական կեանքն ևս մի առանձին հետաքրքրական կամ ուշագրաւ երևոյթ չէ ներկայացնում։ Այստեղ գոյութիւն ունեն Կ. Հ. Բ. Ընկ. ճիւղ, «Կանանց որբանոց» և «Իրիմեան» աշակերտանոց ընկերութիւններ, որոնց գործունէութեան ծանօթ չը լինելով՝ անկարող եմ առ այժմ որևէ կարծիք յայտնել։

Հասարակական հիմնարկութիւններից ուշադրութեան արժանի է գրատ-ընթերցարանը, որտեղ ստացվում են բաւական թւով պարբերական հրատարակութիւններ. միայն զարմանալի է, թէ ինչու պոլսահայ լրագիրներ չեն ստացվում։ Մենք գոնէ քանիցս եղել ենք ընթերցարանում և թիւրքահայ հրատարակութիւններ չենք տեսել։ Անհրաժեշտ է լրացնել այդ պակասը, որպէս զի տեղական ընթերցողները առիթ ունենան անձամբ մօտիկից ծանօթանալու թիւրքահայոց հասարակական կեանքի, նրանց մատուցողականութեան հասարակական գործունէութեան և գրական հոսանքների հետ, որպիսի հանդամանքը բարոյական շաղկապի մի օղակ կը հանդիսանայ մեր և սահմանի այն կողմը գտնվող եղբայրակիցների միջև...

Վերջերս գրադարանապետի գործունէութեան քննադատութեան առիթով տեղական «Արև» և «Գաւառի Ձայն» թերթերը սկսել են «թունդ» բանակիւռ մղել միմեանց դէմ։ Անձնական խնդրանք, շունչից փրփներ և շաբլօնական դարձուածքներ՝ ահա ինչով են զբաղվում իրանց էջերը յիշեալ թերթերը։ Եւ պէտք է իմանալ, որ Ալէքսանդրօպօլում լոյս են տեսնում չորս պարբերական հրատարակութիւններ։ Մի հարցնող լինի, թէ արդեօք ինչով է պայմանաւորված այդ չորս հրատարակութիւնների գոյութեան անհրաժեշտութիւնը. ընթերցող հասարակութեան պահանջներին ընդառաջելու կամ Շիրակի ժողովրդի ծով կարիքները ուսումնասիրելու քարի ցանկութեա՞մբ թէ «գրելացաւով» բռնվածների համար մարդանքի ասպարէզ ունենալու հոգով։

Տեղական, գաւառական մամուլի դերը պէտք է լինի՝ իր շրջապատ ժողովրդի բարմավիսի կարիքների հարազատ արտայայտիչը հանդիսանալով՝ բարմակողմանիօրէն քննել, ուսումնասիրել նրա կեանքը և համապատասխան միջոցներ առաջադրել՝ նոյն կարիքները գէթ մինիմալ չափով հոգալու կամ լրացնելու տեղական գիտակից օյժերի և ժողովրդական գործիչների համագործակցութեամբ։

Հէնց մի այնպիսի համազգային աղէտ և հրատապ խնդիր, ինչպիսին է Շիրակի գիւղացիութեան մասսայական արտագաղթը իր սանտաս մայր երկրից, կարծէք այդ թերթերի խմբագրութիւնների քթի տակ չը լինեն գոյութիւն ունենալիս, այլ մի ինչոր հեռաւոր, անծանօթ աշխարհում... Մինչդեռ ամենայն իրաւամբ սպասելի էր կարդալ այդ թերթերում գիւղացիների արտագաղթի պատճառների փաստալից, ճշգրիտ լուսաբանութիւնը և հականերգործական միջոցների խելացի և նպատակայարմար գործադրութիւնը։

Եւ մեր համեստ կարծիքով, եթէ այդ 4 հրատարակութիւնների փոխարէն տեղական գործիչները՝ ի մի համախմբված՝ միացեալ ոյժերով միայն մի թերթ հրատարակէին, շատ աւելի մեծ և օգտակար գործ կատարած կը լինէին Շիրակի գիւղացիութեան համար, քան թէ միմեանց ջղրու հրապարակ հանվող մի շարք թերթերով, որոնք գնվում են, ըստ մեծի մասին, տեղական ղովրդին, երկրին և տեղային բոլոր պայմաններին։ Պարոնը, ունենալով փորձառութիւն և լուրջ պատրաստութիւն, կարող է ցանկալի ծառայութիւնները մատուցել մեր ժողովրդին ու դպրոցներին և յարմար թեկնածու է այդ պաշտօնի համար։

Չը պէտք է ուշացնել գործը. մեր գաւառներում կարիքը մեծ է, իսկ գործիչների թիւը սակաւ. ցանկալի է, որ հոգևոր իշխանութիւնը օր առաջ ի կատար ածի իր այդ մտադրութիւնը։

Շրջիկ

Շուշի

ԱՄԱՐԱՆՈՑԱՑԻՆ ԷՊԻԶՕԴՆԵՐ

II

Կուսական ընութեան գեղածիծաղ անկիւնում մարդիկ ինքնամոռացման էքստազի մէջ ընկած օրնիբուն աշխատում, տքնում և կաշուից դուրս են գալիս, որ իրանց կարճատև անմիտ կեանքում կարողանան մարմնացնել ապագայի սին տենչերի և անծայր յոյսերի օդային ամրոցները։

Հարստանալու և յղփանալու անսանձ ձգտումներով տարվող, նիւթական անհասանելի ցանկութիւններով օրօրվող, ամենազօր մամոնայի հլու սպասաւորները պատրաստ են մի ժանգոտ կօպէկի համար սողալ ու քծնել, սուել ու կեղծել, հազար ու մի ներելի և աններելի միջոցների դիմել, միայն թէ կրած բարոյական անչափ զըրկանքների փոխարէն ստեղծվի եթէ ոչ իրանց, գոնէ ապագայ սերնդի համար անհատական բարեկեցիկ կեանք...

Գարնան առաջին աւետաբերը սարեակի ծըլվըլացով սկսվում է ամարանոցում կենսահառնդգին աշխատանք...

Մէկը միւսի ետևից, ամենայն արագութեամբ կառուցվում են նորանոր բնակարաններ, քանդվում խարխուլ խրճիթներ, նորոգվում ու վերաշինվում են հները։

Ամարանոցատէրերն աւելի շահվելու և աւելորդ ռուբլիներ կորզելու համար տանում են անարտաւանջ ամեն տեսակ նեղութիւններ. հաշվում են ամարային երեք ամիսներն ապրել խոնաւ ու մութ նկուղներում, գաբշահոտ հաւանոցներում, գոմերում և շատ անգամ ծածկերի ու կտուրների տակ...

Ամարային սեզօնի բացման նախապատրաստական աշխատանքն աւարտվել է։

Այժմ մեր մտաւորը զբաղված է միայն մի բանով, ունի միայն մի հոգս, մի ցաւ։

— Ախ՛, «դաչնիկները» մի շուտ դան, տարին շոգ լինի, «դաչան» լաւ վարձով տրվի...

Մտահոգ ու անհանգիստ դրութիւն։ Սպասելիքների ու երազների անցողական շըրջան։ Անկատելի սլանում են իրար ետևից օրերը, շաբաթներ... Դեռևս չի խանգարվել գիւղի նահապետական իդիլիան...

Հասնում է ամառվայ առաջին ամիսը։ Սեզօնը յայտարարվում է բացված։ Լարված տրամադրութիւն։

Վերջապէս երևում են գլխաւոր ատգեղի նման առաջին հովիկներ. մեր ամարանոցատէրի... կաթնատու կովեր։

Ծպիտ ու ծիծաղ, փայլում են դէմքեր... Բայց ուրախութիւնն երկար չի տևում։

Անողոք բնութիւնն իր անողորմ արհաւիրքներով ու քմահաճոյքներով յօդս է ցնդեցնում ամարանոցատէրերի փայփայած իղձերն ու երազները և ջախջախում նրանց պաշտած «իդէալի» ոսկի թեները...

Նեղ պատեանում ամփոփված, հոգեկանկենսական խղճուկ պահանջներով բաւարարված անտարբեր գաւառացի անատէրն ամարային սեզօնին դառնում է աւելի զգայուն, աւելի խորաթափանց ու հետաքրքրքրվող։

Բայց դարձեալ «дача» և «дачникъ» սահմանափակ հասկացողութիւնների շրջանում։

Ամեն առաւօտ խռովայոյզ մտատէրը ներքին անզուսպ ցանկութիւն է զգում հարցնել նորեկներին կամ տեղեկանալ լրագիրներից քաղաքների եղանակների մասին։

«Անձրևոտ եղանակ»... «օրերը շատ զով են»... «ամարանոց գնացողների թիւը սովորական տարիներից անհամեմատ քիչ է» և նման աւելի «անցանկալի», աւելի «անախորժ» լուրեր։

Ամարանոցատէրը բարկանում, ջղայնանում է։ Պատրաստ է կռուել նոյնիսկ իր ստուերի հետ...

— Էսպէ՛ս էլ մնաքանդութիւն... այ ոչ ու փուչ լինես, բաղդ... այ բրիշակ լինես քաղաք... էսպէս էլ «քեռասդութիւն»... Թուէս ապրուստին... կարվի՛ մեր կեանքը... սաղ տարի երվի, խորովվի, տանջվի, հազար ու մի չարչարանք կրի, թէ ինչ է՝ «դաչնիկներ» գան... էս էլ էսպէս ... այ բարաքեաթը կտրվի հա...

Իսկ աւելի լաւատես մտատէրը շուտով չի յուսահատվում, իր սպասելիքները և յոյսերը խորտակված չի համարում։

Հաստատ համոզված է, որ եղանակները կարող են փոխվել, որ շոգերը կը սկսվեն և «դաչնիկները» խմբերով կը թափվեն ամարանոց, բնակարանների գները կրկին կը բարձրանան.. սեզօնն «ուրախ կանցնի»։

Репортеръ

Մեծ-Դարաքիլիսա

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԱԻՑ

Կարս, 29 յունիսի

Այս տարվայ յունվարի 7-ին լուր տարածվեց քաղաքումս, թէ «Սողոմոնը սպանեց կնոջը և Սողոմոնի կինը ինքնասպանութիւն գործեց»։ Թէև դեռ չէր պարզված՝ ինքնասպանութիւն է թէ սպանութիւն, Սողոմոնը բանտարկվեց։

Յունիսի 28-ին նահանգ. դատարանում նշանակված էր այդ գործը։

Ամբողջ մի ամիս էր՝ Կարսի ազգաբնակութեան մեծամասնութիւնը լարված սպասում էր այդ օրին, երբ դատարանը պիտի պարզէր, թէ դէպքը ինքնասպանութիւն էր թէ սպանութիւն։

Այդ օրը դատաստ. դահլիճը, դատարանը, փողոցներում, դատարանի շուրջը լցվել էր հետաքրքրվող երկսեռ բազմութիւն։

Դատավարութիւնն սկսվեց յունիսի 28-ի առ. ժ. 10-ին և տևեց մինչև ժ. 4-ը։ Ճաշից յետոյ ժ. 7-ին վերսկսվեց դատավարութիւնը, որը տևեց մինչև ժ. 1-ը. դարձեալ չը վերջացաւ, որովհետև թէ վկաները շատ էին և թէ մանրակրկիտ քննութիւն էր կատարվում։

Հետևեալ օրը, ամսիս 29-ին, առ. ժամը 10-ին սկսվեց և 12-ին բոլորովին վերջացաւ։

Ահա գործի եղելութիւնը։

Սողոմոն Ներսիսեանը 12 տարվայ պսակված միջին դասակարգից կապաներով պա-

նկուղի դուռը և, ներս թողեց տիկնոջը...

Մանելով նկուղը՝ կինը մնաց կանգնած նայելիս՝ ոտքերն ու ձեռքերը շղթայակապ, դալկացած, կիսակենդան ու անճանաչելի որդուն։

— Մայրի՛կ...

— Զաւակս, Միշա...

Մայրը և որդի գրկախառնվեցին, չը կարողանալով արտասանել ոչ մի խօսք։

— Այդ ինչպէս քեզ թողցին ինձ մօտ. չէ՞ որ մահապարտի մօտ ոչ ոքի չեն թողնում,—ընդհատելով տխուր լռութիւնը ասաց Միշան։

— Շնորհիւ քո հանդուցեալ հօր՝ պետութեան մատուցած ծառայութեան։

Միշայի հայրը մի պատերազմում հերոսաբար կռուելով սպանվել էր։

— Այսպէս ուրեմն, մայրը, ես ապրում եմ իմ կեանքի վերջին րոպէները. ինչ եմ վայելել այս աշխարհից. դու ինձ պահելը մեծացրել ու պաշտել ես. դու պիտի քաղէիր իմ պտուղը։ Վաղը ինձ կը կախեն, կը զրկեն կեանքից։ Դու պիտի տանջվես իմ պատճառով։ Սոսկալի է, մայրը, սոսկալի՝ կախաղանի տակ, դահճի ձեռքով մահանալը...

— Արիացիր, զաւակս, ես քեզ կազատեմ դահճի ձեռքից...

— Դու ինձ կազատես դահճի ձեռքից, կազատե՞ս...

— Այո՛, կազատեմ ես թոյլ չեմ տայ, թոյլ չեմ տայ, որ դու մեռնես դահճի ձեռքով... զաւակս, դու կը մեռնես իմ գրկում, իմ բազուկների մէջ. մենք միասին կը մեռնենք...

Մայրը ծոցից հանեց փոքրիկ թղթի մէջ փաթաթած թոյնը։

— Ա՛ռ, ընդունիր, զաւակս, սա էլ ինձ։

Որդին մօր ձեռքից առնելով թոյնը՝ ընդունեց։

Մայրը գրկեց մահվան ճիրանների մէջ տառապող որդուն, ընդունելով ինքն էլ իր բաժինը։

Ու մահացան գրկախառնված...

Սրմ. Ե. Աղախանեան

Հին-Ռուխաթ

զարդարում իրանց էջերը յիշեալ թերթերը։ Եւ պէտք է իմանալ, որ Ալէքսանդրօպօլում լոյս են տեսնում չորս պարբերական հրատարակութիւններ։ Մի հարցնող լինի, թէ արդեօք ինչով է պայմանաւորված այդ չորս հրատարակութիւնների գոյութեան անհրաժեշտութիւնը. ընթերցող հասարակութեան պահանջներին ընդառաջելու կամ Շիրակի ժողովրդի ծով կարիքները ուսումնասիրելու քարի ցանկութեա՞մբ թէ «գրելացաւով» բռնվածների համար մարդանքի ասպարէզ ունենալու հոգով։

Տեղական, գաւառական մամուլի դերը պէտք է լինի՝ իր շրջապատ ժողովրդի բարմավիսի կարիքների հարազատ արտայայտիչը հանդիսանալով՝ բարմակողմանիօրէն քննել, ուսումնասիրել նրա կեանքը և համապատասխան միջոցներ առաջադրել՝ նոյն կարիքները գէթ մինիմալ չափով հոգալու կամ լրացնելու տեղական գիտակից օյժերի և ժողովրդական գործիչների համագործակցութեամբ։

Հէնց մի այնպիսի համազգային աղէտ և հրատապ խնդիր, ինչպիսին է Շիրակի գիւղացիութեան մասսայական արտագաղթը իր սանտաս մայր երկրից, կարծէք այդ թերթերի խմբագրութիւնների քթի տակ չը լինեն գոյութիւն ունենալիս, այլ մի ինչոր հեռաւոր, անծանօթ աշխարհում... Մինչդեռ ամենայն իրաւամբ սպասելի էր կարդալ այդ թերթերում գիւղացիների արտագաղթի պատճառների փաստալից, ճշգրիտ լուսաբանութիւնը և հականերգործական միջոցների խելացի և նպատակայարմար գործադրութիւնը։

Եւ մեր համեստ կարծիքով, եթէ այդ 4 հրատարակութիւնների փոխարէն տեղական գործիչները՝ ի մի համախմբված՝ միացեալ ոյժերով միայն մի թերթ հրատարակէին, շատ աւելի մեծ և օգտակար գործ կատարած կը լինէին Շիրակի գիւղացիութեան համար, քան թէ միմեանց ջղրու հրապարակ հանվող մի շարք թերթերով, որոնք գնվում են, ըստ մեծի մասին, տեղական

խանութպաններից՝ ապրանքների փաթեթ դատարելու...

«Քիչ քանակով, բայց լաւ որակով» դէվիզը, երևի, հայերիս համար գոյութիւն չունի։

Մենտօր-Միրաժ

ՄՕՐ ԳՐԿՈՒՄ

Տխուր ու վհատված՝ բանտի բարձր ու հատ դռան առաջ կանգնած էր միջին տարիքով մի կին ու ծեծում էր բանտի դուռը։

— Ի՞նչ էք ուզում,—խոժոռած դէմքով հարցրեց բանտի վերակացուն՝ բանալով դարպասի փոքրիկ փեղկը։

— Որդուս տեսնել եմ ուզում։

— Չի կարելի, այսօր տեսակցութեան օր չէ. տեսակցութեան օրը վաղը չէ միւս օրն է լինելու, այդ չը գիտէք,—պատասխանելով ծածկեց դռան փեղկը։

Տիկինը նորից սկսեց ծեծել երկար, յամառ։

— Ես ձեզ ասացի. ինչ էք գլուխս տանում. հեռացէք...։

— Պարոն վերակացու, ես թուղթ ունեմ պատշաճ իշխանութիւնից բանտապետի անունով։

— Թուղթ ունէք, բա ինչու առաջ չէիք ասում. տուէք ինձ։

Կէս ժամից յետոյ տիկնոջը ներս թողեցին բանտ։

— Ձեր ազգանունը,—դարձաւ բանտապետը տիկնոջը։

— Գրիգօրօվա։

— Ա՜հա՛, դուք այն մահապարտի մա՞յրն էք։

«Մահապարտ» բառը ցնցեց տիկնոջը։

— Խուզարկել սրան մանրազնին և ապա առաջնորդել մահապարտ Գրիգօրօվի նկուղը,—հրամայեց բանտապետը։

Խուզարկեցին մանրազնին։

Զինված չորս հոգուց բաղկացած մի պահակ՝ տիկնոջը առաջնորդեց Գրիգօրօվի նկուղը։

Վերակացուն բաց արեց Գրիգօրօվի

մանկանը դուռը և, ներս թողեց տիկնոջը...

Մանելով նկուղը՝ կինը մնաց կանգնած նայելիս՝ ոտքերն ու ձեռքերը շղթայակապ, դալկացած, կիսակենդան ու անճանաչելի որդուն։

— Մայրի՛կ...

— Զաւակս, Միշա...

Մայրը և որդի գրկախառնվեցին, չը կարողանալով արտասանել ոչ մի խօսք։

— Այդ ինչպէս քեզ թողցին ինձ մօտ. չէ՞ որ մահապարտի մօտ ոչ ոքի չեն թողնում,—ընդհատելով տխուր լռութիւնը ասաց Միշան։

— Շնորհիւ քո հանդուցեալ հօր՝ պետութեան մատուցած ծառայութեան։

Միշայի հայրը մի պատերազմում հերոսաբար կռուելով սպանվել էր։

— Այսպէս ուրեմն, մայրը, ես ապրում եմ իմ կեանքի վերջին րոպէները. ինչ եմ վայելել այս աշխարհից. դու ինձ պահելը մեծացրել ու պաշտել ես. դու պիտի քաղէիր իմ պտուղը։ Վաղը ինձ կը կախեն, կը զրկեն կեանքից։ Դու պիտի տանջվես իմ պատճառով։ Սոսկալի է, մայրը, սոսկալի՝ կախաղանի տակ, դահճի ձեռքով մահանալը...

— Արիացիր, զաւակս, ես քեզ կազատեմ դահճի ձեռքից...

— Դու ինձ կազատես դահճի ձեռքից, կազատե՞ս...

— Այո՛, կազատեմ ես թոյլ չեմ տայ, թոյլ չեմ տայ, որ դու մեռնես դահճի ձեռքով... զաւակս, դու կը մեռնես իմ գրկում, իմ բազուկների մէջ. մենք միասին կը մեռնենք...

Մայրը ծոցից հանեց փոքրիկ թղթի մէջ փաթաթած թոյնը։

— Ա՛ռ, ընդունիր, զաւակս, սա էլ ինձ։

Որդին մօր ձեռքից առնելով թոյնը՝ ընդունեց։

Մայրը գրկեց մահվան ճիրանների մէջ տառապող որդուն, ընդունելով ինքն էլ իր բաժինը։

Ու մահացան գրկախառնված...

Սրմ. Ե. Աղախանեան

Հին-Ռուխաթ

բաղող մի մարդ է։ Սրա կինը՝ Եւգենիան ոչ մի երեխայ չէ ունեցել։ Ահա այս հանգամանքը Սողոմոնի վրա վատ ազդեցութիւն է արել և միշտ բուռն ցանկութիւն է ունեցել գոնէ մի զաւակ ունենալ։

Առաջ բերենք վկաների հաստատ ցուցմունքները։

Սողոմոնի զոքանչը, որ վերջին հինգ տարին միշտ ապրելիս է եղել իր փեսայի մօտ, ցոյց տուեց, որ իր աղջիկն ու փեսան շատ սիրով ապրելիս են եղել իրար հետ։ 12 տարվայ մէջ իր փեսան իր աղջկան ոչ միայն ոչ մի անգամ չի ծեծել, այլև մի կոպիտ, դառն խօսք անգամ չի ասել և շատ յաճախ Եւգենիային (Սողոմոնի կինն է) ուրախացնելու համար զանազան տեսակ ընծաներ էր բերում։ Այդ պատճառ զոքանչը ցուցմունքի վերջը աւելացրեց.

— Սողոմոնը շատ անգամ Եւգենիային առաջարկում էր թէ թոյլ տուր ես մի ուրիշ կին բերեմ, տանս մէջ պահեմ, մի զաւակ ունենանք եւ կրկին նրան դուրս անեմ։ Երբ իմ աղջիկս չէր համաձայնում, այն ժամանակ սկսվում էր վիճաբանութիւն։

Երկրորդ վկան ասաց.

— Յունվ. 7-ին Սողոմոնենց տանը շատ հիւրեր են եղել. կերել են, խմել, պարել, երգել են և դավուլ-զուռնով քէֆ արել։ Պարելու ժամանակ Սողոմոնը նկատել է, որ իր քենակալը պարի մէջ իր կնոջ ձեռքը իբր թէ սեղմել է։ Ահա դրանից առաջացել է Սողոմոնի բուռն խանդը և անտեղի կասկածը, չը նայելով որ այս երկու ընտանիքը շատ մտերիմ յարաբերութիւն են ունեցել իրար հետ։

Զոքանչը շարունակում է.

— Հիւրերը ցրվելուց յետոյ Սողոմոնը շատ բարկացած էր և Եւգենիային ասում էր. «Դու պիտի մեռնես. դու պիտի ինքնասպանութիւն գործես, ինչ միջոցով ուզում ես, այդ դու գիտես. պիտի կեանքդ վերջացնես»։

Հետեւալ օրը՝ յունվարի 7-ին լուր տարածվեց քաղաքի մէջ այդ սպանութեան մասին։ Այժմ ինչպես իմանանք. Սողոմոնն է սպանել կնոջը թէ կինը ինքնասպանութիւն է գործել։ Զոքանչը ցոյց տուեց, որ իր աղջիկը Եւգենիան շատ վախկոտ էր. զէնք, տարբանակ տեսնելիս զզում էր. չէր անցնում այն մահճակալի մօտից, որտեղ գիտէր, որ տարբանակ կայ։

Զոքանչը այս ցուցմունքով ուզում էր ասել, որ այդպիսի վախկոտ կինը տարբանակ չէր կարող բռնեցնել և ինքնասպանութիւն չէր կարող անել։

Ընդհանուրը՝ Բ-ԲՐԼ վկաներ, զրպարտակամները, ցոյց տուին, որ հանգուցեալ Եւգենիան շատ վարժ էր զէնք գործածելու մէջ։ Տարբանակը քանդում, մասերի էր բաժանում, իւղում և նորից դասաւորում էր։

Սրանք մի անգամ խմբովին գնացած են եղել Ճլավուզ՝ ժամանակ անցկացնելու։ Այդտեղ տղամարդիկ հրացաններով նշաններ էին խփում, իսկ Եւգենիան տարբանակ էր արձակում։ Ուրեմն Եւգենիայի համար երբէք դժուար չէր տարբանակի խողովակը դնել բերանը, արձակել և վերջացնել իր կեանքը։

Այս էր այս վկաների ցուցմունքի միտքը։ Սողոմոնի ծառան ցոյց է տալիս, որ սպանութիւնից քիչ առաջ Եւգենիան մտել է խոհանոց և ասել իրան. «Սրբի՛ր, մաքուր սրբիր, տեսնենք ով պիտի բանեցնէ այդ չանկալ-դանակները»։ Այս ցուցմունքը ուզում է համոզել, որ Եւգենիան արդէն մտադիր է ինքնասպանութիւն գործել։

Յունվարի 7-ին կարսում անձրև էր գալիս. սա մի տարօրինակ երևոյթ է։ Եւգենիան անսովոր երևոյթը բացատրում է հետեւեալ կերպով. «Արիւն պիտի թափվի, մարդասպանութիւն պիտի լինի»։ Այս բացատրութեամբ էլ հակացնում է, որ մտադիր է ինքնասպանութիւն գործել։ Զոքանչը իր ցուցմունքների մէջ աւելացրեց.

— Եւգենիան ասաց. «Սողոմոն Ջան, թոյլ տուր վերջին գիշեր քեզ մօտ քնեմ և կարօտս առնեմ»։

Բոլոր վկաներից յետոյ առաջ եկան էկսպերտներ, զինուորական մարդիկ, ամբողջ երկու ժամ խօսեցին գիտութեան և իրանց անձնական փորձերի վրա հիմնված՝ հանգուցեալի բերանի մէջ թոյնի գտնվելի հետքը քննելով աւելի ինքնասպանութիւն դուրս բերին, քան սպանութիւն։

Անհնար է լրագրի էջերում մանրամասնաբար պատկերացնել էկսպերտների շահեկան ցուցմունքները, դրա պատճառով շտապում եմ համառօտել յօդուածս։

Այսօր, ամսիս 29-ին, դատաւորները վերսկսեցին կէսատ մնացած դատավարութիւնը։

Դատախազը կէս ժամ տեղ ճառախօսութեամբ առաջարկեց դատաւորներին ճանաչել Սողոմոնին մեղաւոր և ծանր պատիժ տալ որպէս մարդասպանի։

Սողոմոնին պաշտպանում էին երդ.-հաւ. Դոլուխանեան և Ս. Զամոյեան։ Դատախազից յետոյ խօսք առաւ երդ.-հաւ. Դոլուխանեան և իր մի ժամ և տասն րօպէ տեւող համոզիչ ճառով ցոյց տուեց, որ Սողոմոնը մարդասպան չէ. նրան պիտի ազատել, որովհետև Եւգենիան ինքնասպանութիւն է գործել։

Նորից խօսեց դատախազը. նորից պատասխանեց Դոլուխանեանը, և բոլոր ճառերից յետոյ դատաւորները առանձնացան։ Եւ երբ դատաւորները նորից մտան դահլիճ, նախագահը կարդաց հետեւեալ վճիռը. «Նահանգական դատարանը Սողոմոն Ներսիսեանին մեղաւոր ճանաչելով վճռեց զրկել նրան բոլոր իրաւունքներից և 5 տարի կալանաւորական բաժնում ապաշխարանքի ենթարկել»։ Սարիբեգ Տէր-Մելքսեդեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Հանգուցեալ քաղաքագլուխ Ա. Ս. Մատինովը, ինչպէս յայտնի է, քաղաքին կտակել էր 300,000 ռուբլի լուսաւորական և բարեգործական նպատակների համար։ Այդ գումարից քաղաքը առ այժմ ծախսել է 124,732 ր. 92 կ., դպրոցական և բարեգործական նպատակներով։ Գումարից մնացած 148,496 ր. 30 կ. քաղ. վարչութիւնը ծրագրում է գործադրել դպրոցական և քաղաքային թանգարան, քաղաքային հասարակական ընթերցարան և նկարների գալերէա շինելու վրա։ Այդ շինութիւնը մըտադրութիւն կայ կառուցանել ապնուա-կանների հողային բանկից գնած այն հողամասի վրա, որը գտնվում Բէբուտովսկայա փողոցի վրա։ Այնուհետև, մտադրութիւն կայ կիսարձան կանգնեցնել Մատինովին։ Կիսարձանը լինելու է բրօնզից ձուլված և 1½ արշին մեծութեամբ։ Աշնանը քաղ. վարչութիւնը համապատասխան մի զեկուցում կը մտցնի դումա։

◆ Երեքշաբթի, յուլիսի 1-ին, քաղաքային վարչութիւնը քննեց քաղաքային սպանդանոցի եւմտից նախահաշիւը։ Նախահաշիւի համաձայն, 1915 թ-ին մուտք սպասվում է մինչև 220,900 ռուբլի։ Նախահաշիւի մէջ ծախսի մասը թէև կրճատումների է ենթարկվել, բայց և այնպէս, ընթացիկ տարվայ համեմատութեամբ, 1915 թ-ի ծախսը 5000 ռուբլով աւելացել է, ըստ որում ծախքի ընդհանուր գումարը կազմում է 100,000 ռուբլի։

◆ Երեքշաբթի, յուլիսի 1-ին, Թիֆլիսի ազնուականութիւնը հրաժեշտի ճաշ տուեց նահանգապետ Ա. Գ. Զերնեավսկիին։ Ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ վրաց ազնուականների թատրօնում, ներկայ էին 50 հոգի ազնուականներ, պարապլան իշխ. Կ. Ն. Արբելովի գլխաւորութեամբ։ Ճաշկերոյթը սրտագին ընոյթ ունէր և տեւեց մինչև երեկոյ։

◆ Յուլիսի 2-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամները քաղաքագլուխի պաշտօնակատար Ժուրուլիի գլխաւորութեամբ Վէրայի այգում հրաժեշտի ճաշ տուին նահանգապետ Ա. Գ. Զերնեավսկիին։ Ճաշին ներկայ էին և քաղ. դումայի իրաւասութիւն։ Իսկ այսօր կուժոկի շինութեան մէջ նահանգապետին հրաժեշտի ճաշ են տալու Թիֆլիսում գտնված օտարազգի հիւպատոսները։ Այնուհետև շաբաթ օրը, յուլիսի 5-ին, նահանգապետի պատուին ճաշ կը տան նահանգական տեղական վարչութիւնների պաշտօնեաները։

◆ Այսօր, ամսիս 4-ին, նշանակված է արհեստաւորների ակումբի անդամների ժողովը նոր անդամներ ընտրելու համար։ Արհեստաւորների ակումբի անդամները բանակցութիւններ են վարում առևտրա-արդիւնաբերական ծառայողների ակումբի վարչութեան հետ, որ վերջինս ժամանակաւորապէս իր շէնքը զիջէ, մինչև որ նրանք իրանց համար ընակարան կը գտնեն։

— ԿՈՎԿԱՍ

◆ Դիլիջանից լինժենէր Եարալեան հեռագրում է մեզ, որ հաղորդակցութիւնը Դիլիջանի և Ղարաքիլիսայի միջև վերականգնված է։

◆ Յունիսի 30-ին, Բագուի գաւառական հաշտարար դատարանի քրէական բաժանմունքում հարցաքննութեան ենթարկվեցին «Արամազդ» ֆիլմայի 55 բանաւորները։ Նրանք մեղադրվում են 1358-դ յօդուածով։ Այդ ֆիլմայի մնացած 55 բանաւորները քննելու են յուլիսի 2-ին։ Բանաւորները բոլորն էլ կալանաւորված են և հարցաքննութեան են բերվում բանից։

◆ Յուլիսի 1-ից Գանձակում բացվել է տղայոց ուսուցչական սեմինարիա, որին վերատեսուչ է նշանակված Վ. Գ. Պալլովսկին։ Ուսումնական շրջանի հոգաբարձուի կողմից յանձնաժողովը ներկայումս զբաղված է սեմինարիայի համար յարմար բնակարան գտնելու հոգով։

◆ Ներկայումս Բագուի նահանգում մեծ աւերումներ է անում տաւարի ժանտախտը, ըստ որում առանձնապէս վարակված է Շամախու գաւառի տաւարը։ Այդ պատճառով Բագու տաւար չէ տարվում։

— ԳՈՐՍԱՏԱՆ

◆ Մատդրութիւն կայ այս տարի Նովոբասիյսկում առևտրական դպրոց բանալ։

◆ Գօրեմիկինը մեկնեց Պետերհօֆ։

◆ Ներքին գործերի մինիստր Մակլակով բարձր շրջաններում առանձին զեկուցում է արել Գրիգորի Բասպուտինի մասին։ Բասպուտինի վրա մահափորձ կատարող Գուսեվան հարցաքննութեան ժամանակ յայտնեց, որ Բասպուտինը կանանց զայթակղեցնող ու ստորացնող մէկն է։ Մի գիշեր այդ կինը կամեցել է ապակիով կտրել իր վիզը։ Շատ սանսիլիկներ հարցասնդումներ են արել Բասպուտինի առողջութեան մասին։

◆ «Baku» լրագրի Մոսկվայից ստացած տեղեկութիւնների համաձայն, ծերունի Գրիգորի Բասպուտինը մեռել է։

◆ Մոսկվայի շաքարահաց թխողների գործադուլը շարունակվում է։ Հացի գինը բարձրացել է անչափ։

◆ Կիեվից յայտնում են, որ Մոնաստիրսշչինում անյայտացաւ 10 տարեկան մի աղջկայ, Բօզկա ազգանունով։ Երեխայի ծնողները սովորեցրին նրա ընկերներին, որ նրանք ցուցում տան, թէ իրանք տեսել են, թէ ինչպէս հրէաներ Մելնէր և Բեաբոյ սպանեցին նրան։ Այդ պատճառով էլ ձերբակալեցին հրէաներին։ Մեսական սպանութեան տեղեկութիւնից վրդովված գիւղացիները դիակը գտնելու համար քանդում էին գերեզմանները։ Ցանկարձ երեխան մի օր վերադարձաւ։ Նրա ծնողներն այժմ ձերբակալված են, իսկ հրէաները ազատ արձակված։

◆ «Н. Вр.» Տիւմենից ստացել է մի հեռագիր այն մասին, թէ Բասպուտինը բարեյաջող կերպով բերվեց Տիւմեն։ Հիւանդի մօտ կան երեք բժիշկ։ Նրա կեանքը վրանգից զերծ է։ Մի քանի անգամ քննիչը հարցաքննութեան կանչեց մահափորձ կատարող Գուսեվային, որը ամեն անգամ ուշաթափեց եղաւ։ Գուսեվան կարգանապէս յայտնեց, որ հարցերին չէ պատասխանելու, և երկու օր է սնունդ չէ ընդունում։

◆ «Петерб. Курьеръ» թերթին հաղորդում են Պոկրովսկից, որ Բասպուտինի դերությունը անփոխարինելի է։ Հաւանականութիւն կայ, որ նա կառողջանայ։ Տեղական եկեղեցում բարեկամները և ազգականները մաղթանք կատարեցին։ Եկեղեցին լի էր համակրող բազմութեամբ։

ՄԱՄՈՒԼ

Վրաց «Կոլէ» շաբաթաթերթը, որը չէ կամենում ձեռքից բաց թողնել և ոչ մի առիթ, որ կարող է հայ-վրացական յարաբերութիւնները ըստ «Կոլէի» ճաշակի գուսաւորել, այս անգամ էլ մի ուրիշ գիւտ է արել։

Քաղաքային ծառայութեան մէջ,— ասում է «Կոլէն»,— գտնվում են 56 բժիշկ, որոնցից վրացի 6 հոգի է միայն։ Քաղաքային հիւանդանոցներում բոլորը 175 հոգի ծառայող կայ. բժիշկներ 20, որոնցից երկուսը միայն վրացի։ Ֆելդշերներ, մանկաբարձուհիներ և այլն՝ 32 հոգի, որոնցից մէկը վրացի։ Հիւանդապահները և այլ մանր ծառայողներ՝ 120, որոնցից 7 հոգի վրացի։ Երեք ֆարմացեվտից մէկը վրացի։ Հէնց իրան, Զուբալաշվիլին հիւանդանոցի 34 ծառայողներից և ոչ մէկը վրացի չէ, մինչդեռ այդ յայտնի վրացի մարդասէրը 150,000 ռուբլի է ծախսել այդ հիւանդանոցի իր բաժանմունքի վրա։

«Կոլէն» շաբաթաթերթը, ի հարկէ, ըստ իր դաւանանքի, այս դէպքում ևս գտնում է, որ հայերը Վրաստանի մայրաքաղաքում ամեն կերպ աշխատում են վրացիներին ճնշել և քաղաքային գործերից հեռացրած պահել և այլն։

Արտատպելով «Կոլէից» այս տեղեկութիւնը, վրաց «Թեմի» շաբաթաթերթը իր կողմից աւելացնում է.

Եթէ այս թիւերը ճիշդ են, ապա չի կարելի չասել, որ արդարև խոշոր միակողմանութիւն է ցոյց տուել տեղային քաղաքային վարչութիւնը, որովհետև այդ գործի համար պատրաստի կօնտիրգենտ անշուշտ բաւարար թիւով կը գտնվի և վրացիների մէջ ևս։

Որ քաղ. վարչութեան մէջ պաշտօնների բաշխումը տեղի է ունենում ոչ ըստ արժանաւորութեան, այլ աւելի շատ խնամիաբար, այդ մասին մեր լրագրի էջերում շատ անգամ են տպվել դատապարտողական յօդուածներ, սակայն այդ խոշոր պակասութեան առաջն առնելու համար պէտք է կուսակցութիւն ունեցող քաղաքային հակակեմօկրատիկ կանոնադրութեան դէմ, այլ ոչ թէ մի ազգ մի այլ ազգի դէմ յարուցանելու մտքով թոյն սրսկելով, ինչպէս այդ սովորութիւն է դարձել «Կոլէ» շաբաթաթերթի համար...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 1 յուլիսի

Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցի շէնքի առիթով յանձին յօդուածագիր Յովս. Խօջայեանցի «Մշակի» № 130-ի մէջ խօսում են այն մարդիկ, որոնք շէնքը շուտով սկսելու դէմ պատճառաբանութիւն են գտնում գումարի չափը և շէնքի տեղի փոփոխութիւնը եկեղեցու բակում։

Մեկ՝ Թիֆլիսաբնակ գանձակեցիներիս համար միանգամայն անհասկանալի է, որ այսպիսի հարցը նախ դառնում է լրագրութիւն նիւթ, դեռ ևս խորհրդածութեան առարկայ չեղած տանը։

Ես, որպէս նուիրատու և գանձակեցի, ծանօթ լինելով Գանձակում կատարված եկեղեցական դրամների վատնումների, եկեղեցական հողերի յափշտակութեանց հետ, որոնցից առաջինները շուտով, կը լինեն առարկայ դատաստանական քննութեան և վճռի, երկրորդները մնում են հայ-քրիստոնեաների ձեռքին և նրանց համար ապրելիք են տալիս, անպայման կարևոր եմ համարում հիմարկել շէնքը շուտով որպէս դի այդ գումարների հետ ևս՝ տարիներ անցնելուց յետոյ՝ չը պատահի այն, ինչ որ առաջիններին, և իւրաքանչիւր նուիրատու երբ տեսնի, որ իր կօղէկները գործադրվում են նշանակված նպատակի համար, աւելի ոգեորութեամբ կը գայ ևս նուիրելու, և դպրոցական շէնքը կը կանգնի առանց այլևայլութեան։ Այնպէս որ՝ Յ. Խօջայեանը սխալվում է, երբ գումարի քչութիւնը մէջ է բերում չը սկսելու համար շէնքը։

Տեղի վերաբերեալ խօսելու ժամանակ Յ. Խօջայեան բոլորը չէ ասում. այն է, ինչու համար եկեղեցու բակը փոքր է. փոքր է, որովհետև եկեղեցու բակում գոյութիւն ունեն հայկական սեփական կլուբը և նրա պարտէզը, որոնք անպէտ տարածութիւն են բռնում. և այսօր, երբ կարիք կայ դպրոց շինելու, գեղին չունի եկեղեցիս։ Եւ առաջարկողներ կան, ինչպէս ինձ լուրեր են հասնում, նոր գեղին գնել քաղաքի այլ մասում և այնտեղ կանգնեցնել դպրոցը։ Նախ՝ այսպէս ձեռքերը պէտք է կանխիկ 6—7000 ր. մէջտեղ դնեն, գեղին գնեն, ընծայեն եկեղեցուն և ապա խօսեն. երկրորդ՝ ոչ եկեղեցին այդքան փող ունի, որ իր հողը թողած՝ նոր գեղին գնի, և ոչ նուիրատուներս իրաւունք կը տանք, որ մեր փողերով գեղին գնվի։ Ուրեմն, ինչ եղք գրանել. չը շինե՞լ դպրոցը. թողնե՞լ, որ եկեղեցին մի քանի տարի ևս 1000-ական ր. վարձ տայ օտար բնակարանների, որոնք ոչ մի յարմարութիւն չունեն թէ՞... թէ զուարճութիւնից դեռաստակ դպրոցը, ուսումը և վերացնել կլուբը կամ տալ յարմարութիւն, որ դպրոցը ևս տեղաւորվի եկեղեցու բակում։ Կլուբը ժամանակաւոր է, դպրոցը մշտական. ժամանակաւորը, շուայլութիւնը պէտք է զոհել մշտականին և մատաղ սերնդի հոգևոր և մտաւոր կրթութեան դէմ։

Յ. Խօջայեանը եղել է հոգաբարձու. նրան քաջ յայտնի էր, որ դպրոցական շէնքի համար հանգանակութիւն է սկսված և, ուրեմն, դպրոցը պէտք է շինվի, և հարկ կայ, որ շինվի եկեղեցու բակում. ի՞նչ իրաւունքով նախկին հոգաբարձութիւնը պայմանի մէջ չէ մտցնում կէս, որ երբ ձեռնարկվի դպրոցական շէնքին, պայմանը համարվում է քանդված, և կամ այլ կէս, որը ապահովէր նոր դպրոցի տեղը եկեղեցու բակում և ապա եկեղեցու իր տեղը՝ նրա վերակառուցման դէպքում։ Չէ՞ որ եկեղեցու վերակառուցման հարցը տարիներ առաջ է շարժված և, ինչքան յիշում եմ, կայ մակարդակ անդամ Արդ, ի՞նչ է պատճառը, որ Յ. Խօջայանը այդ բոլորը բերում-կապում է դպրոցի շէնքի հետ այժմ։

Հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է զօրեղ միջամտութեամբ պահանջել, որ դպրոցի համար տեղ բացվի եկեղեցու բակում, կամ քանդել պայմանը և վերացնել կլուբը։

Նուիրատու

—

Ախալցխա, 27 յունիսի

«Մշակի» № 109-ում լոյս տեսած իմ թղթակցութիւնը առիթ տուեց, որ քննիչ յանձնախմբի մի քանի անդամներ և Խ. Թէխմիշեան առանձին յօդուածներով անտեղի յարձակումներ անեն հոգաբարձական այս տարվայ ընտրութիւնների առիթով կայացած ծխ. ժողովի և հոգաբարձութեան անցկաց երեք տարվայ գործունէութեան վերաբերմամբ, առանց սակայն ներկայացնելու իրական ապացոյցներ՝ հաստատելու հոգաբարձութեան իբր թէ վնասակար գործունէութիւնը։ Ինչպէս գիտեն «Մշակի» ընթերցողները, ես իմ յիշեալ յօդուածում այն էի գրել, որ հոգաբարձութիւնը վայելում է ժողովրդի վստահութիւնը, ապացոյց համարելով դրան այն՝ որ հոգաբարձութեան հին կազմը համարեա ամբողջովին նորից վերընտրվեց։ Բայց իմ ընդդիմախօսների գրածներին նայելով, բանից դուրս է գալիս, որ իբր թէ հոգաբարձութեան գործունէութիւնը եղել է վնասակար դպրոցի և եկեղեցու շահերին։ Արդ՝ հարցնում եմ. արդեօք ինչն են համարում վնասակար՝ դպրոցի և եկեղեցու շահերին. միթէ՞ այն, որ հոգաբարձութիւնը խաղաղ կերպով կարողացել է կառավարել դպրոցները երեք տարի շարունակ, թէ այն հանգամանքը, որ ս. Փրկիչ եկեղեցու արդիւնքները, չը նայած նաղել հողերի յետ գնման, աւելի բարձր գրութեան մէջ են այժմ՝ քան թէ առաջ։ Վնասե՞լ է հոգաբարձութիւնը եկեղեցու շահերին արդեօք նրանով, որ կարողացել է գիւղերի և քաղաքումս գտնված կալուածներից ստացվող եկամուտները կանոնաւորել, ազատվել եբէցիտներից երկար ժամանակ վճարվող 600 ր. և կալուածների կառավարչի համար վճարվող տարեկան 800 ր. աւելորդ ծախքերից։ Ինչով է նա վնասել դպրոցների շահերը. արդեօք նրանով, որ իր խնամքին յանձնված, դպրոցներն իրանց դրութեամբ օրինակելի կարող են համարվել ծխ. դպրոցների շարքում, թէ մի գուցէ այն բանով, որ ամեն տարի ուսուցչական խմբերին չէ արձակած և կամ ազգական վերաբերմունք չէ ունեցած դէպի ուսուցչութիւնը։

Անտեղի են նրանց յարձակումները նաև այն ծխ. ժողովի կազմի վերաբերմամբ, որը վերընտրեց հոգաբարձական նոր կազմին։ Ճիշդ է, հոգաբարձութեան ընտրութիւններին մասնակցել են նաև մի քանի ուսուցիչներ, որոնք ակտիվ դեր էլ կատարել են, բայց չէ՞ որ այդ առաջին անգամը չէը, այլ միշտ էլ անցեալում եղած է այդպէս, էլ ինչու չքմեղ ձեռնալ և դատապարտել միայն այդ ծխ. ժողովը։ Չէ՞ որ հոգաբարձական հաշիւները քննող յանձնախմբի մի անդամն էլ կարապետեան դպրոցում պաշտօնավարող մի ուսուցիչ էր, որի համար չէ կարելի ասել, որ բարեացակամ կամ փափկանկատ եղած է հոգաբարձութեան գործերը քննելիս։ Ծխ. ժողովներում ուսուցիչների մասնակցութիւնը կարող է միթէ պակասեցնել հոգաբարձական կազմի արժանիքը։ Ես ընդունում եմ, այո, որ լաւ կը լինէր, եթէ նոյն հոգաբարձութեան կառավարած դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչները ձեռնպահ մնային հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելուց, բայց էլ աւելի լաւ կը լինէր, որ ծխ. համայնքը կատարէր իր պարտականութիւնը, մասնակցէր ծխ. ժողովներին և ոչ թէ բացակայէր և յետոյ էլ քննադատէր ուրիշներին։

Ո՞ւր էիք դուք, քննիչ յանձնախմբի պ. պ. անդամներ և տասը ծխական ժողովների պ. նախագահ, ինչու չը մասնակցեցիք այդ ծխական ժողովին, որ ձեր մասնակցութեամբ ապատէիք հաստատելու հոգաբարձութիւնը դպրոցի և եկեղեցու շահերին վնասող հոգաբարձութիւնից։

Գ. Արաքելեան

—

Սուխում, 17 յունիսի

Մծարայի դպրոցի մասին «Մշակում» տպված յօդուածին՝ թեմական տեսուչ Յ. Տէր-Միրաքեան իբր թէ պատասխանում է («Մշակ» № 123) իմ ընկերներիս կողմից տրված հնարաւորին։

Յոյց տալու համար թէ որքան արդարութիւն ու տրամաբանութիւն կայ Յ. Տէր-Միրաքեանի ասածների մէջ, առաջ եմ բերում նրա գրութիւնը զատ-զատ հատուածներով։

1) Մէջ բերելով մեր հեռագիրն ամբողջովին թեմ. տեսուչը գրում է. «Անկշռատ և առանց պատասխանատուութեան գիտակցութեան գրված այս տողերի նկատմամբ հարկ եմ համարում» և այլն։

Այդ տողերի համար միայն այսքանը կասեմ, որ թեմ. տեսուչը թող նեղութիւն կրի իջնելու ատաուածային բարձունքից և իրանից զատ մի քիչ էլ ուրիշների մէջ կշռադատելու պատասխանատուութեան գիտակցութիւն ունենալու կարողութիւն տեսնի, մանաւանդ որ հեռագրի մէջ հայերէն լեզուով գրված էր. «Մեր պատասխանատուութեամբ հրապարակօրէն յայտնում ենք»...

2) «Տարաձայնութիւն էր ծագել նորահաստատ հոգաբարձութեան եւ ուսուցչական կազմի մէջ *), տեղի էին ունեցել մի շարք գրութիւններ թեմական առաջնորդը գրութիւններով փորձել էր խաղաղութիւնը վերականգնել և ի վերջոյ, ստանալով հոգաբարձութիւնից հեռագիր, որ ուսուցիչ Ամատունին իբրու օտարահպատակ չի կարող պաշտօնավարել, հրամայել էր վարվել համաձայն օրէնքի»։

Հէնց այս փոքրիկ պարբերութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս Յ. Տէր-Միրաքեանը տրամաբանօրէն սայթաքում է և ճշմարտութիւնը խեղաթիւրում։

Իր խօսքը՝ նորահաստատ հոգաբարձութիւնը տարաձայնութիւն է ունեցել ամբողջ խմբի հետ, սակայն հանկարծակիորէն կերպով դուրս է շպրտվում խմբի մէջ անդամը՝ Ե. Ամատունին։

Իրողութիւնն այն է, որ ոչ ուսուցչական խումբը և ոչ էլ Ե. Ամատունին առիթ չեն տուել տարաձայնութիւններ առաջ բերելու։ Ասածիս ապացոյց կարող է լինել այն, որ հէնց պայքարող կողմերը միշտ շեշտել են ուսուցիչների անմեղ լինելն ու անարդարացի պատճառով տուժելը։

Գալով Ե. Ամատունու օտարահպատակ լինելուն՝ կասեմ, որ այդ խնդիրը լուծված էր դեռ ուսումն. տարվայ սկզբին, երբ հնարաւոր մարդիկ շրջանի կառավարչապետից օրինական թոյլտուութիւն վերցրին նրա ազատ պաշտօնավարութեան համար։

Թեմական տեսչին այս դէպքում միայն մի բան էր մնում անելու՝ պաշտպանել անմեղ ու աշխատաւոր ուսուցչին յանդուգն յարձակումից։ Սակայն Յ. Տէր-Միրաքեանը ոչ միայն չը կատարեց իր պարտքը, այլև իր ջղայնացած դրութիւնից բղխած դրութեամբ մի հարուած էլ ինքը հասցրեց հալածվածին։

3) «Իսկ ես ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել այդ ուսուցչի արձակման գործում»։

Յ. Տէր-Միրաքեանի այս խոստովանութիւնը միանգամայն ճշմարիտ ու անկեղծ է...

Ամբողջ ուսումնական տարվայ ընթացքում դպրոցը փոթորիկների մէջ է, հեռագիրներ ու գրութիւններ են տեղում թեմական իշխանութեան անունով, դպրոցը փակվում-բացվում է, միանգամայն ապօրինի կերպով՝ ոչ-ցանկալի ճանապարհով՝ ուսուցիչը հեռացվում է ու այս ամենի վրա հակելու և արթուն հովիւ լինելու պարտք ունեցողը միայն տարվայ վերջին յայտարարում է. «Ես ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել...»։

Ուղիղ բայց անպատասխան արդարացում։ Խ. Աւդալբեկեան

*) Ընդգծումները իմն են։ Խ. Ա.

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՑ

Հնդկաստանում փոխանորդութիւն հաստատելու անհրաժեշտութիւնը

Ռանգուն, 1 յունիսի

Հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ամեն մի անհատ ևս իրաւունք ունի իր համեստ կարծիքն յայտնելու ազգային այս և այն խնդիրներում՝ մենք ևս Պարսկա-Հնդկաստանի թեմի ներկայի առաջնորդական ընտրութեան և թեմի բաժանման չը բաժանման յարմար առիթից օգտվելով՝ պարտք ենք համարում տեղիս մի քանի գիտակից անհատների խոնարհ կարծիքն ևս յայտնելու Հնդկաստանում փոխանորդութիւն հաստատելու անհրաժեշտ ու անյետաձգելի հարցի մասին։

Բոլորին ևս յայտնի է, որ Հնդկաստանը շատ հեռու ընկած և միանգամից անջատված մի վայր է թէ Էջմիածնից և թէ նոյն իսկ իր առաջնորդանիստ Նոր-Զուղայի Ամենափրկչեան վանքից։ Հետևաբար՝ նա գրեթէ շատ քիչ է հետաքրքրվում հայկական կեանքով և ամեն մի ընդհանուր ազգային-հասարակական և այլևայլ խոշոր ու հետաքրքրական խնդիրները շատ անգամ անլսելի են մնում հնդկահայ համայնքին։

Ճիշդ է, Ամենափրկչեան վանքը անցեալ 300 տարիների ընթացքում (հայերի Պարսկաստան տարագրվելու օրից) վարել է Պարսկա-Հնդկաստանի ազգային-հասարակական գործերը և իր ուղարկած յատուկ վիճակաւոր քահանաների միջոցով հնդկահայ համայնքի ուշադրութիւն է հրաւիրել դէպի ազգային վերածնութիւնը և մայրենի լեզուի պահպանումը, բայց այսու ամենայնիւ՝ հարկաւոր է ունենալ մի կրթված, կարող և առկուն ու գործունեայ փոխանորդ, որպէսզի վերջինս կարողանայ Հնդկաստանի հայութիւնը կապակցել միմեանց հետ և մեծ դարկ տալ հնդկահայոց ազգային վերածնութեան ու ինքնագիտակցութեան գործին։

Փոխանորդի ամենայարմար բնակավայրը Կալկաթան է համարվում, բայց նա պարտաւոր է անընդհատ շրջել ու այցելել Հնդկաստանի ամեն մի քաղաքը, Զավայի կղզիները և մինչև անգամ Հանգ-Կոնգի

ու անձնուիրաբար աշխատել, քարոզել և յորդորել բանալ դպրոցներ (որտեղ որ կարիքը մեծ է), ոգևորել դէպի հայ եկեղեցին, վերականգնել հայկական զրականութիւնը. մի խօսքով, հայկական ոգի ներշնչել նրանց (գլխաւորապէս նոր սերունդի) սրտում և սերտ կապով կապակցել մխիթարեանց ու ընդհանուր հայութեան հետ։

Ահա այն անյետաձգելի ու փրկարար միջոցը, որով կարելի կը լինի մեր հնդկահայ նոր սերունդի յարատեւութիւնը գէթ որոշ չափով ապահովել։

Դպրոցն է այն միակ և գլխաւոր լուսատու փարոսը, որ հայկական ոգու ճառագայթները արմատագում է մատաղ սերնդի սրտի և հոգու խորքերում և նրա սիրտը զօրեղ կապով կապակցում է իր նուիրական սրբավայրերի, իր ազգային պատմական անցեալի, իր կրօնական մաքուր սկզբունքների և մի խօսքով՝ ընդհանուր հայութեան այն իդէալի հետ, որ դարերից ի վեր անշեղ կերպով պահել է իր անխախտութիւնն ու ազգային զոյութիւնը։

Դժբաղդաբար Հնդկաստանը (բացի Կալկաթայից) զուրկ է ազգային միացման ամենագլխաւոր կապը հանդիսանող ազգային դպրոցներից։ Միմիայն Կալկաթան է, որ ունի «Մարդասիրական ճեմարան» անունով բարձրագոյն կօլէջը, որը իր գոյութեան օրից (1821 թ.) մինչև այսօր իր կարողութեան չափով փառաւոր ու փայլուն դեր է խաղացել թէ Հնդկաստանի և թէ Նոր-Զուղայից գաղթած մատաղ սերունդի համար։

Արդէն մի քանի ամիս է, ինչ-որ տեղիս վիճակաւոր քահանայ հ. Վահան Աղանեանը և մի քանի գիտակից անձնաւորութիւններ խօսում, խորհրդակցում և աշխատում են հայկական լեզուի ուսուցման գործը աջողեցնելու, գէթ նոյն իսկ տեղիս անգլիական դպրոցներից մէկում մի հայերէն լեզուի ուսուցիչ ունենալու։ Այդ խորհրդակցութեան հետ միաժամանակ շօշափվում էր նաև փոխանորդութեան հարցը, որ ստացանք «Մշակի» № 91-ը, որի մէջ տպված պ. Աթայեանի յօդուածն ևս գալիս է մեր կարծիքն արդարացնելու՝ Հնդկաստանում յաջողութիւն հաստատելու վերաբերմամբ։

Երանի՜ թէ այդ հարցը վաղուց ի վեր հաստատված լինէր. բայց նորից լաւ է ուշ, քան երբէք...

Մ. Գասպարեան

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՆՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 7 յունիսի

Սալախանէի հողային խնդիրը մի նոր փուլի մէջ է մտել։

«Մշակին» արդէն գրել էի, որ կառավարութիւնը վերջին անգամ երևան բերված փատաթղթերից համոզված լինելով Վարդի վանքի սեփականութեան անժխտելիութեան՝ միջոցներ է ձեռք առել նոյն գիւղի հողերը վանքին վերադարձնելու. այդ նպատակով Սալախանէ ուղարկվեց Վանի ոստիկանութեան տեսուչը, որ գնաց և շուտով վերադարձաւ՝ բանագրաւող Հասան աղայի հետ ինչ-որ փոխուքներից յետոյ։ Իսկ այժմ երևի նորից ձեռք են ուզում առնել կօմպրոմիսի ուղին. բանաւոր քիւրդը հրաւիրվել է Վան, իսկ վալի Թահսին բէյն ուզում է համաձայնութեան եղանակով գործը մի վախճանի բերել. անշուշտ առաջարկելու է հոգաբարձութեան զիջումներ անել, բաւականանալ կիսամիջոցներով. ինչպէս մի քանի տարի առաջ ուրիշ վալիներ առաջարկել են, գուցէ նորից առաջարկներ լինեն փող ստանալ ու գիւղը թողնել քիւրդին. վերջապէս Հայկավանքի գերեզմանոցի խնդրի նման ուզում են սակարկել. բայց չենք յուսում, որ հոգաբարձութիւնը օրհէ զիջում կարող լինի անել, երբ արդէն տեսաւ, թէ գերեզմանոցի խնդրով զիջումը որչափ աղմուկ բարձրացրեց։ Բանագրաւող քիւրդը տեղս գալուց յետոյ՝ իթթիհադական շրջաններում փայփայվում է, և տարակոյս չը կայ, որ աշխատում են հարցը դնել ազգայնական հողի վրա։

Մայիսի 31-ին Վարդի վանքի սահմաններին մօտիկ սպանվել է գեմիշխանէցի մի քիւրդ ձիապան, որ գնացել էր այնտեղ իր ձիերը արածեցնելու. մարդասպանութեան մէջ կասկածներ են եղել վանքի քիւրդ նէօբէդէը (պահապան) Խալիդի վրա, որ ձերբակալվել է վանքի հայ հովիւի հետ։ Ձիշդ 15 տարի առաջ միևնոյն օրը և միևնոյն տեղ (1899 թ. մայիսի 31-ին) նոյն պահապան Խալիդն ինքնապաշտպանութեան պատճառով սպանել էր երկու քիւրդ ձիապանների և ինքն էլ վիրաւորվելով փախել. կառավարութիւնը այն ժամանակ կալանաւորեց վանքի շօշրար Գաբրիէլին և իբրև ոճրագործ մահվան և ապա ցկեանս բանտարկութեան դատապարտեց, թէև նա բոլորովին անմեղ էր։ Գաբրիէլը 15 տարի բանտ նստելուց յետոյ, հազիւ թէ մի քանի ամիս առաջ ազատվել է բանտից ու վերադարձել վանքը՝ ծերացած, կորաքամակ եղած և անիծելով թիւրքական արդարութիւնը։

Մարակ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղազվին, 16 յունիսի

Կարծէք այս տարի բաղդը ժպտում է Ղազվինին։ Նախկին երկիրն ասպատակող, արհեստական սով առաջացնող նահանգապետին փոխարինել է Մօթամադ-ուլ-Սալթանէն, նախկին ագէնտ և թրիքամոլ քաղաքագլուխը՝ մի երիտասարդ, գիտակից և անձնուէր գործիչ։ Թէ նահանգապետի ատեանում և թէ քաղաքապետարանում օրինաւոր կարգ ու կանոններ են ստեղծվել. այդտեղ այլ ևս ներս չեն հրաւիրվում միայն հարուստներն ու կալուածատէրերը, իսկ գիւղացին ու չքաւոր դասակարգը յետ մղվում. երկուսն էլ անձամբ ընդունում են ժողովրդին անխտիր և արդարադատութեամբ վճիռներ կայացնում։ Ցուսահատված ժողովուրդը ոգևորվել է։

Քաղաքումս ամեն ինչ առատ է և էժան։ Ցորենը, որ նախկին դատաւորի օրօք բարձրացել էր պղեղը մօտ 4 ր., այժմ ծախվում է 1 ր., մխը, որ ծախվում էր ֆունտը 20 կ, այժմ ծախվում է 8—9 կ., և այսպէս ամեն ինչ։ Նախկին դատաւորի կլիէնտ հացագործները անցեալ օրերը փորձում են նաև Մօթամադ-ուլ-Սալթանէին իրանց ճիրանը ձգել. իրանց երեք ներկայացուցիչների միջոցով առաջարկում են նրան մի խոշոր կաշառք, եթէ հացի արժէքը մի փոքր թանգացնի։ Նահանգապետը համաձայնվում է և հրաւիրում երեք ներկայացուցիչներին միւս օր առաւօտեան գալ և վճռագիր ստանալ։ Դուրս են ներկայացուցիչները և դատաւորը հրամայում է նրանց հրապարակապէս փայտի կապել։ Այս դէպքը ոչքան ոգևորութիւն է առաջացրել ժողովրդի մէջ, նոյնքան և սարսափ ցարդ ժողովրդին կեղեքող հացավաճառներին, մսագործներին, ածուխ և փայտ ծախողներին և այլն։

Սկիզբը հրաշալի է, եթէ այսպէս շարունակվի մինչև...

Մար

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Հաւասի աղբիւրից հաղորդում են «Рѣчь»-ին, որ Թուրքան-փաշայի միսիան Պետերբուրգում չէ պակվել աջողութեամբ։ Կառավարութիւնը սառնասիրտ է վերաբերվել Թուրքան-փաշայի ամեն խնդիրներին։ Նրան յայտնվել է, որ Ռուսաստանը միւս պետութիւններից աւելի քիչ է հետաքրքրվում ալբանական հարցով և անընդունելի է համարում այն մտադրութիւնը, թէ Ալբանիա տեղափոխվի Սկիւտարի միջազգային զօրաբանակի մի մասը։ Փոխադարձութեան մասին Թուրքան-փաշային բացասական պատասխան տրվեց։

✦ «Веч. Время»-ին հաղորդում են, որ Բերլինում ձերբակալվել է մի ռուս գնդապետ, որի անունը գերմանական մամուլը չէ ուզում տալ. ձերբակալվել է նա այն ժամանակ, երբ, իբր թէ, չափում է եղել Բոստերբերդ բերդը։

✦ Բէլգրադից հաղորդում են «Бирж. Вѣд.»-ին, որ տեղեկութիւն կայ, թէ կառավարութիւնը օրինագիծ է մշակում տերրօրիստների դէմ, որը սկզբունքում կը մտցվի այն ժամանակ, երբ սա կը բացվի։

✦ Պարիզից հաղորդում են, որ Բուրցեվը հաստատել է, թէ Պարիզի ռուսական բոմբիստների գործում աչքի ընկնող դեր է խաղացել էմիգրանտների շրջանում Ժան անունով յայտնի պրովոկատորը։ Նա ձերբակալվածներին գինել է ռումբերով և ինքը թաղնվել։

✦ Այն տեղեկութիւնը, թէ Բէլգրադում աւստրիացիների ջարդ է պատրաստվում, ընդհանուր իրարանցում առաջ բերեց։ Աւստրիական դեսպան Գիզլը դիմել է Պաշիչին, պահանջելով միջոցներ ձեռք առնել պաշտպանութեան համար։ Աւստրիացիները թաղնվեցին իրանց դեսպանատանը։ Գիզլի ընտանիքը և աւստրիական ու գերմանական հիւպատոսարանների անդամները մեկնեցին Զեմլին։ Սերբիական կառավարութիւնը տարակուսանքի մէջ է, որովհետև ջարդի մասին ոչ մի մտադրութիւն կամ տուեալ չէ եղել, որ այդօրինակ լուրեր տարածվէին։

✦ Բէլգրադում աւստրիացիների ջարդ պատրաստելու լուրը Վիէննայում, առանձնապէս բօրսայում, իրարանցում առաջացրեց։ Արժեթղթերն ընկան։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Սարագ գնացքը № 6—12 ժ. 8 ր. ցերեկ., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Ելիսու 5 ժ. 43 ր., Հաջի-Կարալ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.։ Պուսուսար գնացքը № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Ելիսու 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կարալ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցերեկ.։ Մարդասար գնացքը № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Ելիսու 1 ժ. առ., Հաջի-Կարալ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.։ Մարդասար գնացքը № 12—4 ժ. 5 ր. ցերեկ., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Ելիսու 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կարալ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.։ Խառն գնացքը № 22— 4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցերեկ., Ելիսու 4 ժ. 58 ր. ցերեկ.։ Հաջի-Կարալ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ.։

ԲԱԼՈՒՄ.—Պուսուսար գնացքը № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 7—2 ժամ 18 ր. ցերեկվա, հասնում է Միխայլօվօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ Խառն գնացքը № 21 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ Սարագ գնացքը № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԹԵՐԵՒԱՆ.—Պուսուսար գնացքը № 4/3—12 ժ. 56 ր. ցերեկ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրոպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մտնելու), Նախիջան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցերեկ.։ Խառն գնացքը № 24/25 (IV կարգի վագոններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրոպօլ 4 ժ. 18 ր. առ., Արպաչայ 10 ժ. 8 ր. ցերեկ., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցերեկ., Նախիջան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ Մարդասար գնացքը № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրոպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ Մարդասար գնացքը № 14|13—11ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրոպօլ 9 ժ. 41 ր. ցերեկ., Գարս 1 ժ. 8 ր. ցերեկ.։

ԲՈՐԺՕՄ.—Մարդասար գնացքը № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բորժոմ 12 ժ. 48 ր. ցերեկ.։ Մարդասար № 19/20—3 ժ. 20 ր. ցերեկ., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցերեկ., Բորժոմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Սարագ գնացքը № 5—7 ժ. 41 ր. եր. Պուսուսար գնացքը № 3—8 ժ. 58 ր. առ.։ Մարդասար գնացքը № 7—1 ժ. 42 ր. ցերեկ.։ Խառն գնացքը № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ Մարդասար գնացքը № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԼՈՒՄԻՑ.—Պուսուսար գնացքը № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ Մարդասար գնացքը № 8—5 ժ. 55 ր. ցերեկ.։ Մարդասար գնացքը № 10—9 ժ. 51 ր. առ.։ Խառն գնացքը № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ Սարագ գնացքը № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պուսուսար գնացքը № 4Լ/3—7 ժ. 21 ր. եր.։ Խառն գնացքը № 26/27 (IV կարգի վագոններով)—4 ժ. 41 ր. ցերեկ.։ Մարդասար գնացքը № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ Մարդասար (Կարսից) գնացքը № 16|15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդասար գնացքը № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ Մարդասար գնացքը № 19/20—7 ժ 25 ր. առ.։

ԲԺՇԿ
Ե. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ցուսիսի 1-ից ընդունում է հիւանդներին
ԱԲԱՍԹՈՒՄԱՆՈՒՄ։ Էլեքտրաբուժական
կաբինէտ։ Բժշկութեան ֆիզիկական մեթոդներ։
(Ե. ու. Կ.) 400. 100—29

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քիշինեվի հայոց թիւ.-գիմ. համար հարկաւոր է մի փոքրված
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,
շաբաթական 22 դասով (հայոց լեզու, կրօն և երգեցողութիւն), որը հմուտ պիտի լինի եկեղեցական երգեցողութեան, կարողանայ կազմել քառաձայն խումբ իր ղեկավարութեամբ ուսն և կիրակի օրերին եկեղեցում երգելու։
Մանրամասն պայմանները ըստ համաձայնութեան։
Ռոճիկ 720 ր., սենեակ, ծառայ, վառելիք և ջուր։ Տարվայ վերջը կը տրվի 30 ր. ճանապարհածախս։
Յայտարարութիւններով դիմել դպրոցի հոգաբարձու բժ. Ե. Գիւլխանդանանցին մինչև յուլիսի 20-ը Քիշինեվ, Земская больница.
659. 5—4

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՈԳՈՒՏ „ՄՇԱԿԻ“ ՖՈՆԴԻ
հետեւեալ գրքերը.
1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹԵՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, գրամ 5 գ. Ա.Ա. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի»-յօրելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.
Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(2) 10—10

Ալէքսանդրոպոլի Քաղաքային Ուպրավան

հրաւիրում է ցանկացողներին, որոնք կը կամենան ստանձնել Ալէքսանդրոպոլ քաղաքում էլեքտրական կայարան կառուցելու, քաղաքը լուսաւորելու և էներգիան մասնաւոր անձերի վաճառելու կօնցեսսիան, ուղարկել Ուպրավային իրանց յայտարարութիւնները ոչ ուշ օգոստոսի 1-ից ս. թ.։ Մանրամասն պայմանները կօնցեսսիային վերաբերեալ կը մշակվեն այն ժամանակ, երբ քաղաքի և կօնցեսսիոնէրի միջև համաձայնութիւն կը կայանայ հետեւեալ հիմնական պայմանների վերաբերմամբ.

1. Էլեքտր. լուսաւոր. փիծը՝ սիւներով հանդերձ, քաղաքի փողոցները և հրապարակները լուսաւորելու համար, պէտք է կառուցվին քաղաքի ցուցմամբ և, կօնցեսսիայի ժամանակը լրանալուց յետոյ, առանց որևէ պակասութեան, ձրիաբար ամբողջովին անցնում են ի սեփականութիւն քաղաքի։
2. Կօնցեսսիայի ժամանակը։
3. Քաղաքի փողոցները և հրապարակները լուսաւորելու համար սպառած էներգիայի սակագինը առանձին է, մասնաւոր աբօնենտներին վաճառելու սակագինը առանձին է, մասնաւոր աբօնենտներին վաճառելու սակագինը առանձին։
4. Ցօգուտ քաղաքի՝ կայարանի կողմից իւրաքանչիւր K. B. Վ.-ի համար որոշ վճար։
Կօնցեսսիան կը տրվի նրան, ով քաղաքի համար ամենաձեռնտու պայմաններ կառաջարկէ։
666. 3—3
(օ. մ.)

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպ. Հոգաբարձութիւնը

սրանով յայտարարում է, որ իր խնամքին յանձնված Դպրոցում առաջիկայ 1914/15 ուս. տարվայ համար ազատ տեղեր կան բոլոր դասարանների մէջ, սկսած Գ. պատրաստականից մինչև վերին դասարան (բացի III և VI դասարաններից)։

Ընդունվող աշակերտների տարիքը պիտի լինի՝ Գ. պատ. 9—12, I դաս. 10—13, II դաս. 11—14, IV դաս. 13—16, V դաս. 14—17, VII դաս. 16—20։

Խնդիրները ուսման, ծննդեան (խսկական) և ծագի վկայականների հետ ներկայացնել մինչև առաջիկայ օգոստոսի 20-ը Դպրոցիս պ. Վերատեսչի անունով։

Ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 25-ից։

(25, յուլ. 4, 9, 15) 622. 5—3

95 ԿՕՊԵԿՈՎ
ՄԵԾ ՀԻԱՑՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ
ՏՆԱՅԻՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐՔՈՅԿԸ
Այս գրքոյկով իւրաքանչիւրը կարող է գուշակել այլոց մտքերը, տեսիլներ առաջացնել, իմանալ ով ում է սիրում, ամենքի անունը։ Օձը փայտ կարելի է դարձնել, իսկ ջուրը գինի։ Մագիայի խորհուրդները և գաղտնիքները վերջապէս բացված են։ Զարմայորը ընկել է վերջապէս և այժմ կարելի է վերցնել շինկացած երկաթը մերկ ձեռքերով, մխել մեր գլխի մէջ, ծակել իրան սրով ցուցադրել կարած խօսող գլուխը և ինքն իրան անխոցելի դարձնել։ Ջուրը գրամի վերածելու արուեստ։ Բնակարանը վարձնապէս լցնել ջրով կամ մուգ խուլով և բարմաթիւ այլ շլացուցիչ փօխուններ։ Փօխունների ժամանակ ամեն ոտն կարելի է վերածել կախարդված ամրոցի։ Գինը 95 կօպ.։ Ուղարկ. է վերադիր վճ.։ Սաքսան և վերադիր վճ. համար ուղարկ. հաշվում է 25 կ.։ Զգուշացէք կեղծիքներից։ Նոր գրոյն հրատ.։ Լրացրած 272 էջ և բազմաթիւ նկար.։ Т-во «ЗАРЯ», Варшава, отд. 51.
(4, 11,) (В. 36514) 4—3

ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑ
բոլորովին հարկաւոր չէ։ Փոխ. 200 ր. արժեցող ոսկէ ժամացոյցի առաջարկում ենք անմիջական կերպով բերել տալ Բերլինից Գերմոն. նոր ոսկուց շինված ժամաց. «ԼՈՒՆՕՄԵՏՐ» անունով, որը թէ ձևի և թէ հրեղէնի, կողմից չէ տարբերվում ոսկէ ժամացոյցից և արժէ 4 ռուբ.։ Այդ ժամաց. թէ տրամ. և թէ կանացին, շատ տարակ է, երկու փականներով ծածկված էլեքտր. միջոցով, 18 քարանձ. ոսկէ հատ շերտով։ Ժամաց. մեխանիզմը ամենալաւ տեսակի է, անկէր «Լեվէ-Վիվիրը» քարերով, լարումը «Բլոմենտաուր» 40 ժամը 1 անգամ և մինչև բոլոշները ստուգված ընթացքով։ Ուղիղ բանկու համար հրաշքաւորում են 10 տարով։ Ժամաց. գինը 4 ռուբ., 2 հատ՝ 7 ր. 50 կ., 4 հատ՝ 14 ր. 25 կ.։ Ով մեզանից բերել տայ այդ ժամաց., նա ընդմիշտ շնորհակալ կը մնայ։ Իւրաքանչ. ժամաց. 2Ր-ի կցում ենք. 1) Ցոտմ. շղթայ երկկողմ, կամ կանացի պարանոցային, ֆիլմն. խսկ. ոսկուց, 2) Բրելոկ-բրելոկ պարզական հետաքրքր. տեսարաններով և 3) Զամշեալ քսակ ժամաց. համար։ Ճանապարհածախքը, հանդերձ մաքսով, 50 կ.։ (Մի քիր 75 կ.)։ Պատուէրները ճշդիւր ուղարկում են վերադիր վճ. և առանց կանխավճարի։ Դիմել կարելի է ամեն լեզուներով, հետևեալ հասցէով, որը կարելի է պատագրել և կամ թէ դուրս կտրել և ամուր կպցնել ծրարի երեսին (փակ նամակներին կպցնել 10 կ. մարկա, իսկ բաց նամակներին՝ 4 կ.)։ Հասցէագրել՝
Berlin 51. I. Strumfeld
Берлинъ 51. Klösterstr. № 42
(18,26. յուլ. 4) (В. 36460) 4—4

Թիֆլիսի Նահանգական Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ Թիֆլիսի Արքունական Պալատում օգոստոսի 3-ին 1914 թ. ցերեկվայ ժամը 12-ին տեղի կունենայ թէ բանաւոր և թէ ծրարված յայտարարութիւններով ընդհանուր և մասամաս ԱՃՈՒՐԴ, երեք օրից յետոյ՝ օրինակն կրկնաւորվով, կապալով տալու պայմանագիրը հաստատելու օրվանից երեք տարվայ ժամանակով, սակայն ոչ վաղ, քան ներկայումս գոյութիւն ունեցող պայմանագրի ժամանակի լրացումը, Թիֆլիսի նահանգի տարբ. բերված էտապային պունկտերի համար սայլեր մատակարարելու և պահելու գործը, բացառութեամբ միայն երկու սայլի՝ Դուշէթի գաւառի (Մցխէթ և Ցիլկան վայրերի էտապային դիօրների համար, որոնք կապալով կը տրվեն յունվարի 1-ից 1915 թ.։ Այն անձերը, որոնք կը կամենան բանաւոր կերպով մասնակցել աճուրդին, պարտաւորվում են աճուրդը նշանակված օրվայ մինչև ժ. 11-ը ներկայացնել այդ մասին Թիֆլիսի Արքունական Պալատին խնդիր, կցելով առաւ. գումարները, կոչման վկայագիր և պահանջվող գրաւական—տարեկան կապալային գումարի 1/3 մասը։ Ծրարված յայտարարութիւններով առաջարկ անողները պարտաւոր են, ոչ ուշ քան մինչև ժամը 11-ը աճուրդի օրվայ, ներկայացնել կամ ուղարկել Թիֆլիսի Արքունական Պալատին յայտարարութիւն, գրված պետ. կապալ. և մասակար. կանոնագրքի 144-րդ յօդ. պահանջին ձևով, կցելով նոյնպէս վերոյիշեալ գումարները ու գրաւակարը։ Այն յայտարարութիւնները, որոնք անհամապատասխան կը լինեն պետ. կապալ. և մասակար. կանոնագրք. 144-րդ և 145-րդ յօդ. պահանջին, կը համարվեն անվաւեր։ Սոյն աճուրդին վերաբերեալ կօնդիցիաները ցանկացողները կարող են տեսնել Նահանգական Վարչութեան մէջ և Արքունական Պալատում ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 12-ը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թիֆլիսի նահանգի էտապային պունկտերի և նրանց համար մատակարարվելիք սայլերի քանակի

№ № գծագրի	էտապային պունկտերը՝ մշտական ցանկով	Մատակարարվելիք սայլերի քանակը	Կա՛յ էտապային դիօր.	Ե՞րբ է լրանում էտապ. սայլերի պահպ. ժամանակամիջոցը.
1	Թիֆլիսի	6	Աքսոր. ուղարկելի բաժան. կից	22 օգոստ. 1914 թ.
	Սղեռախի գաւառում			
2	Լաղոդեխի	2	կայ	
3	Ալազանի	2	նոյնպէս	
4	Կակաբեթի	2	նոյնպէս	4 հոկտ. 1914 թ.
5	Կաչրեթի	2	նոյնպէս	
6	Նուկրիանի	5	չը կայ	16 նոյեմբ. 1914 թ.
7	Մուկուզանի. . . .	1	կայ	
	Էտապային պունկտեր ժամանակաւոր սայլերով			
	Թիֆլիսի գաւառում			
8	Մուխրօվանի . . .	3	կայ	21 սեպտ. 1914 թ.
9	Գոմբորի	3	նոյնպէս	
10	Վաղինի	4	նոյնպէս	24 սեպտ. 1914 թ.
11	Սարթաճալայի . . .	4	նոյնպէս	30 սեպտ. 1914 թ.
	Ախալքալաքի գաւառում			
12	Խերսվինի	2	կայ	22 օգոստ. 1914 թ.
13	Ախալքալաքի . . .	2	չը կայ	
	Թելաւի գաւառում			
14	Թելաւի	3	չը կայ	21 սեպտ. 1914 թ.
	Ախալցխայի գաւառում			
15	Ացխուրի.	2	կայ	22 օգոստ. 1914 թ.
16	Ասպինձի	2	նոյնպէս	
17	Ախալցխայի	2	չը կայ	
	Գօրիի գաւառում			
18	Բորժոմի	1	չը կայ	22 օգոստ. 1914 թ.
	Դուշէթի գաւառում			
19	Մցխէթի	1	կայ	տրվում է յունվ. 1-ից 1915 թ.
20	Ցիլկանի	1	նոյնպէս	
	Ընդամենը . . .	50		

Խորհրդական՝ Ս. Պէրշկէ

Գործավարի օգնական՝ Զախարով

670. 3—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный